


*Ա. Մ. Բաբայան*

ՏՕԲԹ. ԱՇՈՏ ՊԱՆՉԻՎԱՆԵԱՆ

# ՀԻՒԱՆԴԱՊԱՀԻ ԴԱՍԸՆԹԱՑԲ

Ի ԳՐԻՄ. ԳԱՐՈՒ

## ԽՈՆԱՄԲ ՀԻՒԱՆՈՂԱԳ



ՆՕՐԱԳՐԵԿ

ՎԱՆՉՐԱՄ ՄԱՐՏԻԿԵԱՆ

Նախածեռնութեամբ

ԵՆՆԻ ԳԱՐՈՒԻ ԱՂՔԱՏԱՅ ՆՊԱՍՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ

### ՆԻԹԵՐՈՒ ԱՄՓՈՓՈՒՄ

- 1.— Խոնամբ հիւանդաց. Հիւանդապահի դերք.
- 2.— Մաճ եւ իր գլխաւոր նշանները.
- 3.— Լոզանք, Գրեխ, Յրտալում, Կաթեցում, Օժանում.
- 4.— Մարտոպական խորովակի խանգարումներ, Լեզուի, Կոկորդի, Սաւաճի եւ Աղիքներու հիւանդութիւններ.
- 5.— Օձախ, Երակասապ, Արեան քրչանի խանգարումներ.
- 6.— Շնչառական հիւանդութիւններ. Թոխախ, Թոխասապ եւն.
- 7.— Մորթային հիւանդութիւններ. Գոս (ուեուզ), Բարբուրա.
- 8.— Ջրային հիւանդութիւններ. Կաթում, Յիւարութիւն եւն.
- 9.— Արիւնամոտութիւններ եւ անմիջական դարման. 10 — Արդեր. Հարսանիք, Կարմախս եւն. եւն. եւն.





61

ՏՕԲԹ. ՊԱՀՁԷՎԱՆԵԱՆ

ՅԻԻԱՆԴԱՊԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՅՔ

ԽՆԱՄԲ ՀԻԼԱՆՈՂԱՅ



A 59614

ՆՕՐԱԳՐԵԿ

Վ.Ա.ՀՐԱՄ ՄԱՐՏԻԿԵԱՆ

Նախաձեռնությունքամբ

ՖԷՆԻ ԳԱՐՈՒԻ ԱՂՔԱՏԱՑ ՆՊԱՍՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ



ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆ  
ԵՐԵՎԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆ  
ԼԻԾՈՒՄԸ Ե. Յ. ԿՈՒՅՈՒՄԸ  
1915 թ. հունիսի 14

4. Հունիս, 1915

Տպ. Արաբ

ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆ  
ԵՐԵՎԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆ  
ԼԻԾՈՒՄԸ Ե. Յ. ԿՈՒՅՈՒՄԸ  
1915 թ. հունիսի 14



# ՀԻՒԱՆԴԱՊԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑՔ

## ՀԻՒԱՆԴԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ

Ա . Կ . Ա . Ս

Երբ բոլոր Օսմանցիները, առանց ազգի խտրութեան, երկրին ներկայ տագնապալի օրերուն հայրենասիրական մի-  
ենոյն խանգով տոգորուած, անգոսնկով մաճը, հրացան  
ձեռքերնին՝ Մայր հայրենիքի պաշտպանութեան կը դիմին,  
«Հայ Բժշկական Միութիւնն» ալ, միենոյն զգացումով վառ-  
ուած, Ամեն . Ս . Պատիրարք հօր թեկադրութեամբ զեղեցիկ  
գաղափարը յղացաւ այդ հայրենիքի հերոսներուն տառապանքը  
մեղմացնելու փութացող, անոնց վերջին յանձնարարու-  
թիւնները լսող հիւանդապահ և հիւանդապահուհիներ պատրաս-  
տելու դասընթացք մը հաստատել :

Բժշկութիւնը, ինչպէս գիտէք, երկու լրացուցիչ մասերէ  
կը բաղկանայ Տեսական և Գործնական . իմ նախորդ յարգելի  
արուեստակիցներս ձեզ լաւ կերպով բացատրեցին սոյն երկու  
մասերը : Այժմ ինձ վիճակած ըլլալով «Հիւանդապահի դասըն-  
թացք» ի լրացուցիչ վերջին բաժինը, բնականաբար իմ նիւթս  
աւելի գործնական քան թէ տեսական պիտի ըլլայ . որով ձեզ  
պիտի առաջնորդեմ սոյն սեմէն ներս որ ցաւի տունը, հիւան-  
դանոց կը կոչուի :

Հոն է որ դուք պիտի կիրարկէք ձեր մինչև ցարդ ստա-  
ցած զիտական ծանօթութիւնները, մեղմելով ցաւը և մխի-  
թարելով տառապող հիւանդը, այդ վայրին մէջ է որ դուք  
պիտի աշխատիք : Աշխատութեան մը արդիւնաւորման հա-  
մար ամէնէն անհրաժեշտ պայմանը կարգ ու կառնոնն է : Հի-  
ւանդանոցին մէջ ձեր աշխատութիւնը, լարուած մեքենայի  
մը նման կանոնաւոր և ճշտութեամբ պէտք է կատարուի -

ձեր այդ գործը այն տան միայն արգիւնաւոր կ'ըլլայ երբ կէտառկէտ կիրարկուի որոշուած կանոններու համաձայն առանց փոքր ինչ չեղելու անոնցմէ : Առէք առաջաստանաւ մը, հիւսիսէն կամ հարաւէն փչող քամիին շնորհիւ կրնայ ճամբորդել, բայց շատ անգամ առանց իր մտադրած վայրը հասնելու, թու՛մբի մը բաղխելով կը խորտակուի, սա պարզ պատճառով որ՝ առաջաստանաւը առանց ղէկի էր և չէր կըրցած պէտք եղած ուղղութիւնը ստանալ :

Հիւանդապահներ և հիւանդապահուիներ, ձեր աշխատութեան ղէկն ալ կարգ ու կանոնը պիտի ըլլայ, ասոր շնորհիւ միայն ձեր աշխատութիւնը արգիւնաւոր և դիւրատար պիտի դառնայ : Ձեր հիւանդապահի ղըաղումներէն զատ պարագայ ժամեր պիտի կրնաք ունենալ՝ մտածելու ձեր իսկ անձին, առողջութեան, զուարթութեան և հաճոյքին վրայ :

Այս հակիրճ բացատրութիւններէն վերջ ձեզ հետ ահա կը մտնենք հիւանդանոցէն ներս՝ սրահներուն և սենեակներուն մէջ :

#### ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ ՍՐԱՀՆԵՐ — ՍԵՆԵԱԿ ՀԻՒԱՆԴԱՅ.

Հիւանդանոցի մէջ ձեր ուշադրութեան արժանի ամենէն էական կէտը Մաքրութիւնն է :

Ուր որ անմաքրութիւն կը տիրէ՝ հոն շուտով կը կազմուին մանրէներու բոյները, հիւանդառիթ սերմեր (germe), որոնք թէեւ ու է մարդկային աչօք անտեսանելի են, բայց շնչուելով վնասակար :

Օդը մարդուս ամենէն անհրաժեշտ մէկ տարրը կը կազմէ. առանց անունդի օրերով կարելի է ապրիլ, բայց առանց օդի ոչ իսկ մէկ վայրկեան :

Շատ դիւրին է ուրեմն հասկնալ օդին անմիջական կարևորութիւնը կեանքի համար, ուրեմն որքան պէտք է հոգածու ըլլալ օդի մաքրութեան : Ապականեալ օդը վտանգաւոր հիւանդութեանց պատճառ կ'ըլլայ : Միշտ պէտք է օդաւորել սրահը և արգիլել օդի ապականութիւնը : Ահա մաքուր օդի բաղադրութիւնը. — Մաքուր օդը 23 % բթուածին

(oxygène) 77 %<sub>0</sub> բորակածին (azote), 3 — 6 %<sub>00</sub> բնածխային թթու (acide carbonique) և 6 — 9 %<sub>00</sub> ջրոջ չոզի (vapeur d'eau) :

Օդի ազդանութեան պատճառները բազմաթիւ են : Չեզ պիտի յիշեմ ամենէն կարեւորները :

Շնչառութիւնը ինքն իսկ օդի ապականութեան պատճառներէն մեկն է . ներշնչուած օդէն մաս մը թոքային մազերակներէն ծծուելով կ'այրի և արիւնամբուրութեան (hématoze) գործողութիւնը տեղի կ'ունենայ : Արտաշնչուած օդը 19 %<sub>0</sub> միայն թթուածին կը պարունակէ փոխանակ 23 %<sub>0</sub> բորակածինի քանակը արտաշնչման տեսն ալ նոյնը կը մնայ , իսկ ածխային թթուն (acide carbonique) որ մաքուր օդին մէջ քանի մը հազարերորդ միայն կ'ենթադրուէր , 100ին 3-4ի կը բարձրանայ : Որով օդին մէջ գտնուող , այդ թթուին քանակը սուկնալով և միւս կողմէն թթուածինը քիչնալով օդը կ'ապականի : Արտաշնչուած օդին մէջ բուսական քանակութեամբ ալ ջրաչոզի կը գտնուի :

Այս մասին չեմ ուզեր տեղի ծանրանալ , նկատելով որ ինձմէ առաջ առողջարանութեան բաժնին մէջ արդէն բացառուած պէտք է ըլլայ այս պարագան : Օդի ապականութեան պատճառներէն կրնանք թուել նաև լուսաւորութիւնները եւ ջեռուցումները . Որովհետև լուսաւորման և ջեռուցման մէջ այրումներ (combustion) է որ կը կատարուին , որոնք օդին թթուածինը կը ծծեն և բնածխային թթու կ'արտադրեն , և այսպէսով կ'ապականեն օդը :

Ազոտա ձեմիչներէ յառաջ եկած գոլորչիացումները (ématisation) բուրդէ անկողինէ արձակուած փոշիները , և ասոնցմէ զատ թոքային յուզաթաղանթէն (muqueuse) արձակուած ջրաչոզիին մէջ գտնուած գործարանաւոր մարմիններուն տարբազարութիւն (décomposition) օդը կ'ապականեն :

Ինչ արտադրութիւններ որ տեսանք թոքային շնչառու , թեան մէջ , գրեթէ առաւել կամ նուազ քանակով նոյն տարրերը կը տեսնենք մորթային շնչառութեան մէջ :

Յարկարամնի մը (արարթըման), օդը որ շարունակ չի

նորոգուելիք և ուր բազմաթիւ անձեր կը մնան՝ շուտով կ'ապականի, և երբ առաւօտուն կանուխ առաջին անգամ զուար բանանք անմիջապէս կ'զգանք զարշահաութիւնը :

Համառօտեմք օդի ապակտնման համար մեր խօսածները . — 1. Թրուածնի անբաւականութիւն (Insuffisance d'oxygène), 2. Բնածխային թթուի յաւելում (augmentation d'acide carbonique), 3. Մարդկային մարմնէն արտադրուած ջրաշոգիին մէջ զանուած գոծարանաւոր մարմիններ (organismes humains éxhalés de la vapeur d'eau), յետոյ բթօմայինի (ptomaïne) նման կարգ մը թոյներ, 4. microorganismes) գործարանաւոր փոքր էակներ: 5. Վերջապէս հիւանդանոցի սրահին մէջ զանուած փոշիներն ալ, իրենց մէջ մանրէներ կենդանակոն էակներ (être animal) կը պարունակեն, որոնք վարակիչ հիւանդութեանց սերմերը կը համարուին :

Այս սերմերը, երբ ակարակազմներու կողմէ անուրի կարգ մը հիւանդութեանց պատճառ կրնան ըլլալ որոնցմէ ամենէն վատնդաւորն է թոքախտը (tuberculose) :

Օդը չնորոգուող չմաքրուող սենեակի մը կամ սրահի մը մէջ, շարունակ կեցող հիւանդները կրնան վարակուիլ այդ հիւանդութեամբ ինչպէս նաև հոն աշխատող հիւանդապահները և հիւանդապահուհիները :

Անհրաժեշտ է ուրեմն պէտք եղած միջոցները ձեռք առնել, սենեակը ապակտնած օդէ զերծ պահելու համար: Ապականուած օդին մէջ է որ միքրոպներ յառաջ կուգան և հոն առկախ կը մնան, ինչպէս է խուխի, կղկղանքի փոշիացումները. զորս կրնանք շնչել կամ տարբեր կերպով ստանալ :

Այժմ լու մը համոզուեցանք ու սորվեցանք թէ մաքրութիւնը առողջութեան համար անհրաժեշտ է. տեսնենք հիմայ ուրեմն այդ նպատակին համար գործածուած միջոցները, որոնցմէ առաջինը՝ ալլաուէն է (ballayage) :

Արահին մէջ ալլաուէքը բժիշկի այցելութենէն առաջ պէտք է կատարել, ինչպէս նաև սենեակի օդին մաքրութիւնը և ջերմութեան չափաւորումը :

Եթէ բժիշկին այցելութենէն առաջ մաքրուած ըլլայ սը-



քանը, հիւանդներու, վէրքերու քննութիւնը մաքուր միջավայրի մը մէջ տեղի կ'ունենայ ինչ որ էտական պայմանն մըն է բժշկութեան համար :

Արանը օրը երկու անգամ պէտք է աւելի . գիշերային հիւանդապանը առաւօտեան դէմ պէտք է աւելի, իսկ ցերեկեայ հիւանդապանը կէս օրէ վերջ, սրագէտի հիւանդաց ցերեկեայ ճաշի ընթացքին յառաջ եկող կերակուրի անախորժ հոար սրահին օգաւորմամբ և աւլուելով անհետանայ : Աւելու պարագային, նկատողութեան արժանի կէտ մը կայ որ է՝ օդի հոսանքի մէջ աւլելի զգուշանալ, որովհետեւ այս պարագային փոշիները օդին մէջ առկա կը մնան և կը վնասեն իրենց ներկայութեամբ :

Աւլուութիւնը անկողնի յարդարանքէ վերջ պէտք է կատարել, որովհետեւ երբ սրանը աւլած ենք և անկէ յետոյ զաշն կը կատարենք, այդ գործողութեամբ փոշիներ յառաջ կուգան, որոնք օրը կ'ապականեն :

Ամէն վայրկեան վերջապէս փոշիներ յառաջ բերելէ պէտք է զգուշանալ :

Սակայն աւլուութի աւելի լաւ ու յանձնարարելի է սպունդով կամ թրջած լաթով սրելի և փոշիները առնել : Այս գործողութեան համար սրահին կամ սենեակին մէջ զրանուող կորասիները բացի հիւանդին անկողնէն, պէտք է անդափոխել, և մանրակրկիտ՝ կերպով սենեակին բոլոր մասերը, պատին և մանձակային մէջ զանուած միջոցը, վերջապէս ծակածուկը ( coins et recoins ) մաքրել :

Աւլուութի սրահին մէկ ծայրէն սկսելով պէտք է մինչև մէջտեղը զոյգ և յետոյ միւս դէմի ծայրէն պէտք է սկսիլ և նախորդ անգոր հասնիլ : Այսպէս երկու ծայրէն սրահին մէջ հաւաքուած փոշիներու կոյար խնամով պէտք է հաւաքել և այրել :

Այս կերպ աւլուութի առաւելութիւնը սա է որ փոշիները մէկ ծայրէն միւս ծայրը չեն անդափոխուիր և ցիրուցան ըլլալով օդը չեն ապականեր : Սրահին առաւելութեամբ, միշտ

մաքուր պէտք է ըլլայ և առ այս ի հարկին պէտք է  $1\frac{0}{100}$  սիւլֆիմէի լուծաջուրով լուալ երբեմն :

Առաստաղն ալ մաքրելու համար, երկաշն յօդով աւելի մը վրայ թրջած լաթ մը պէտք է անցնել և խնամով սրբել բոլոր մասերը, անկիւնները և եզերքները :

Կան կարասի (ameublements) .— Հիւանդին սենեակին մէջ աւելորդ և անօգուտ կարասիներ պէտք չէ ունենալ, մէկ քանի ծաղկի թաղարներու ներկայութիւնը կը թոյլատրուի սենեակին տխուր տեսարան մը չընծայելու և հիւանդին հոգեկան հաճոյք մը պարգեւելու համար :

Վարակներ. — Ճերմակեղէններուն պահարաններն ևւ միշտ մաքուր պէտք է մնան, այնպիսի կանոնաւորութեամբ յարգարուած պէտք է ըլլան ճերմակեղէնները որ մինչեւ իսկ մութին մէջ, առանց գժուարութեան և առանց աւնոնց յարգարանքը աւրելու, կարենանք մեր ուզած ճերմակեղէնը առնել :

Մասնաւոր հակաբուժիւն պէտք է կատարել դեղի դարակներու վրայ, ուշադրութիւն ընելու է սրպէսզի դեղի սրուակներուն վրայ պիտակները մտցուած չըլլան : Հիւանդին գործածած դաւաթներուն մաքրութեան մեծ ուշադրութիւն պէտք է ընել և դանոնք փոշիներէ և միքրոպներէ դէրժ պահել :

Հագուստներ (Vêtements) .— Հիւանդին ճերմակեղէնները կարելի եղածին չափ շուտ պէտք է փոխել և անմիջապէս լուացարարուհիին յանձնել . փոխանցիկ հիւանդութեանց պարագային ճերմակեղէնները ջեռոցի (étuve)ի մէջ պէտք է դնել :

Ճերմակեղէններու հականերման համար գանոնք  $1\frac{0}{100}$  սիւլֆիմէ և կամ  $\frac{0}{100}$  10 chlorure de zinc կամ  $50\frac{0}{100}$  sulfate de cuivre լուծաջրին մէջ պէտք է խօթել : Վերջապէս հականերմական ամէն միջոց պէտք է ի գործ դնել, Արդէն բժիշկը գործածելի հականերմական դեղերը ստրագապին համեմատ կը հրամայէ :

Հիւանդին բնական պէտքի դոճացման տմանը, սենեակէն դուրս պէտք է հանել և հականեխական լուծաջուրով լուայ:

Ուռխամանը (crachoire), միզամանը (urinale), կզկզամանը (fécatoire) որոնք բաւական խորութիւն ունեցող անօթներ են պէտք է եռացած ջրով լուայ և մաքրել, թէև սոյն ամաններու մաքրութիւնը քիչ մը դժուար աշխատութիւն մըն է, բայց երբ խղճմտօրէն աշխատիք՝ կարելի է նպատակին հասնիլ:

Ապակեայ ամանները եռացած զաղջ ջրով լուայէ վերջ մաքուր լաթով մը պէտք է սրբել չորցնել և փայլեցնել: Հիւանդապահներ և հիւանդապահուիներ, հոգածութիւն պէտք է ընէք, որպէսզի հիւանդանոցի այցելուները, աղտոտ կօշիկներով կամ կրկնակօշիկներով սրտն չմաննն և հիւանդին հետ շատ յխօսին:

Բարեխառնութիւն (température). — Սրահին բարեխառնութիւնը  $16^{\circ}$ — $17^{\circ}$  պէտք է լլլայ:

Վարագոյր (rideau). — Վարագոյրները սրահին մէջ աւելորդ կարասի համարուած են, մանաւանդ փոխանցիկ հիւանդութեանց յատուկ տաղուարներու համար բնաւ վարագոյրի հարկ չկայ: Եթէ վարագոյրը անհրաժեշտ դատուի, պէտք է միակտուր և ճերմակ կտաւէ ըլլայ, որպէսզի աղտոտութիւնը շուտով նշմարուի:

Լոյսը. — Արեւին լոյսը ստղջութեան պահպանման ամենէն անհրաժեշտ մէկ պահանջն է: Ժողովրդային ստացուածք մը շատ պերճ կերպով արդէն կը բացատրէ արեւին կենսատու դերը երբ կ'ըսէ. Հոն ուր արեւը չի մտնէր՝ բժիշկը յաճախ կը մտնէ:

Ուրեմն արեգակը ամենամեծ հակոռնեխիչն է. ան է որ ոյժ ու զօրութիւն կը պարգեւէ տկարացած հիւանդին և հիւանդն ալ բնագոյմամբ արդէն արեւուն լոյսը կը փնտռէ ինչպէս նորածինը մօրը ծիծը, սնանկու համար:

Անոնք, որոնք զրկուած կը մնան արեւուն լոյսէն ընդ-

հանրապէս կ'ըլլան նուազարիւն (anémique) և գունատ, որովհետև իրենց արեան կարմիր գնդիկները (globules rouges) կը պակսին :

Արեւին բնութեան մէջ կատարած դերի մասին աւելի քոր համոզում մը գոյացնելու համար ամենարկ մը նետենք քուսական կեանքի վրայ, կը տեսնենք որ այն բոյսերը որոնք զրկուած են արեւի լոյսէն, կը դեղինն և կը թառամին, որովհետև բոյսին մէջ գանուող (chlorophyle) ը կանանչանիւթը կը պակսի, ինչպէս արեան մէջ գանուած կարմիր գլխաթիկները կը պակսէին, որոնք արեան կարմիր գոյն մը կուտային իրենց ներկայութեամբ :

Անկողիւն.— Նախամեծար է որ հիւանդին անկողինը երկաթէ ըլլայ, ոչ սակայն շատ լայն և ոչ ալ շատ բարձր, որպէսզի հիւանդը անկողինէն դիւրութեամբ կարենայ իջնել և բժիշկին քննութիւնը դիւրանայ :

Մահճակալը, այնպիսի գիրքով պէտք է գետեղուած ըլլայ, որպէսզի գոնէ անոր երեք կողմէն կարելի ըլլայ անցնիլ :

Հիւանդին գլուխը պատին և նայուածքը սրահին ուղղուած պէտք է ըլլայ :

Անկողինը մէկ քանի մասերէ կը բաղկանայ . Մազալին անկողին (sommier) կամ յարգանկողինէ մը (paillasse) . պատասառը (matelas) . երկայն բարձեր (travers) ուրիշ մէկ քանի փոքր մասեր՝ սաւան (drap), ծածկոց (couverture), մամլաթ (մուշամպա toile ciré), որը անկողինն և սաւանին մէջտեղի մտալն մէջ կը գտնուի : Մամլաթը միայն բժիշկին յանձնարարած պարագային պէտք է գործածել . որովհետև անոր աւտական գործածութիւնը քրտինքի չափոցումը արգիւյնով փտախա յառաջ կրնայ բերել : Հիւանդութեան տեսակին համեմատ անկողնի յարգարման ձեւերը կը փոխուին :

Երբ հիւանդը ծանրաչնչութենէ (asthme, բրֆ ԳեՅեւ) և կամ սրտի հիւանդութենէ կը տուտայի, այն տեսն զրուխը վեր նստած պէտք է պատկիլ :

Եթէ հիւանդը տան մէջ է պէտք է արեւ մտած սենեակ մը ըլլայ մահճակալը և այնպէս զնել որպէսզի հիւանդը քիչ մը երկինքը կարենայ տեսնել, ուշադրութիւն ընելով որ արեւին լոյսը աչքը չի մտնէ, սենեակին

մէջ paravant, մը պէտք է գտնուի. սենեակը օդաւորելու  
առին հիւանդը օդի հոսանքէն պահպանելու համար: Երբ  
paravant մը կարելի չլլայ հայթայթել՝ պարզ թամաճը ձերմակ  
աստան մը կրնաք գործածել անոր տեղ:

Հիւանդ մը սրուն ստորին մէկ անդամը կտարած է,  
հորիզոնական կերպով մը պէտք է պառկեցնել և ան-  
կողնին և յարդանկողնին մէջտեղը տախտակ մը պէտք է  
դնել որպէսզի կարծր ըլլայ և հիւանդը ցաւ չ'զգայ ոտքը  
չարժելով: Շատ անգամ հարկ կ'ըլլայ հիւանդ մը մէկ անկողի-  
նէն միւս անկողինը փոխադրել, այս փոխադրութեան համար  
չի պահանջուիր որ հիւանդապահը և կամ հիւանդապահուհին  
յաղթանգամ մէկը ըլլայ, միջին ոյժով հիւանդապահ մը դիւ-  
րութեամբ կրնայ կատարել այս պաշտօնը, բաւական է որ  
գիտնայ իր ընկիւնը:

Աջ բազուկը երանգներուն (cuisse) վերի կողմէն ան-  
ցընելով ձախ բազուկը մէջքին մէջտեղէն պէտք է անցնել և  
յանձնարարել հիւանդին որ իր բազուկներով ձեր վզին փաթ-  
թուի և այս գիրքովը վերցնելով հիւանդը գոյն կը դնէք  
իր նոր անկողինը:

Եթէ կ'ուզէք որ գլուխն ալ միեւնոյն կողմը ըլլայ, աջ  
կողմէն առէք և քովի անկողնին աջ կողմէն մտէք. իսկ եթէ  
կուզէք որ գլուխը հակառակ կողմը դնէք, հիւանդը միեւնոյն  
կերպով առնելէ վերջ երկրորդ անկողնին ձախ կողմը դրէք:

Երբ հիւանդին վիճակը շատ ծանր է, փոխադրութիւնը  
երկու անձով պէտք է կատարել: Չեզմէ մէկը իր բազուկնե-  
րը մէջքին տակէն պէտք է անցնէ, միւսը երանգին և կոնքին  
տակէն, և այսպէս հիւանդը տեղաւորել նոր անկողնին մէջ:

Հիւանդին մարմինը իր ախտին յարմար դիրքի մը մէջ  
պէտք է դնել. եթէ վնասուած մասը սրունքը կամ ձեռքն է,  
պէտք է որ այդ վնասուած կամ վիրուսորուած մասը իր արմա-  
տէն վեր բռնուած ըլլայ, որ արեան համախտուած (conges-  
tion) չպատահի, որուն հետեւանքը կ'ըլլայ ցաւ և ուռեցք:

Չեզմէ ո՞վ մորթի խոց (panaris) ուռեցած չէ: Երբ ձեռքը  
վար կախուած ըլլայ ցաւեր կ'զգացուին և բնազգարար են-

թական միշտ ձեռքը վեր կը բռնէ, այս ձեւով արհւնախոնումը կ'արգիլուի և ցաւը մեղմանալով կ'սփոփուի:

Ծածկոյթ (couverture). — Հիւանդին ծածկոյթին ծանրութեան մասին պէտք է ուշադրութիւն ընել, ան իր ծանրութեամբ պէտք չէ հիւանդին նեղութիւն կամ ցաւ պատճառէ. ծածկոյթը որքան կարելի է թեթեւ և տաքցնող պէտք է ըլլայ և բաւական ալ լայն, որպէսզի հիւանդապահին բացակայութեան ատեն մի դուցէ. ծածկոյթը վար իյնալով հիւանդին ցրտառութեան պատճառ ըլլայ: Կարգ մը հիւանդութեանց պարազային այդ ծածկոյթները որքան որ թեթեւ ըլլան, դարձեալ ցաւ կը պատճառեն. ասոր համար հարկ կ'ըլլայ երկաթեայ կամ արածեւ շրջանակ մը դնել (cerceau) անկողնին մէջ և ծածկոյթը անոր վրայ թողուլ առանց ուղղակի մարմնոյն դաշխուլ: Եթէ կարելի չըլլայ այդ երկաթեայ շրջանակը հայթայթել, այն ատեն ձեր մտաջիւղութեան կը մնայ անմիջական միջոց մը ստեղծել:

Երբ հիւանդը ծանրաշնչութեամբ կը տառապի, կռնակը շատ մը բարձեր դնելով զայն նստած վիճակի մը մէջ պէտք է պահել, բայց երբ բարձերը պակսին հիւանդին կռնակը ակտու մը կը դնենք ակտուին ոտքերը դէպի վեր դարձած. այս պարագային բարձ մը բաւական կ'ըլլայ:

Երբ հիւանդը նուազում ունենայ, անմիջապէս բոլոր բարձերը վերցնելով հիւանդը հորիզոնական դիրքով պէտք է պառկեցնել, մարմինը պէտք է շփել և թրջած լսիթով ձաղկանի (flagellation) կատարել դէմքին վրայ: Ի հարկին արուեստական շնչառութեան ալ պէտք է զիմել որուն վրայ սիտի խօսիմ վերջը, ենթադրելով որ սակայն դուք արդէն անգամ մը վիրարութեան դասընթացքի մէջ ուրված էք զայն:

Երբ ձեզի պատգարակի (brancard) մը վրայ դրուած հիւանդ մը բերեն, և հարկ ըլլայ զայն սանդուխներէն վեր առաջնորդել, գլուխը դէպի առաջ ըլլալով պէտք է հանել պայմանով որ հիւանդը ոտքի բեկում (fracture) չունենայ:

Ոտքի բեկման պարագային ճիշտ հակառակ ուղղութեամբ պէտք է վեր հանել՝ ոտքերը դէպի առաջ, որպէսզի մարմնոյն

ծանրութիւնը ճնշելով . ոսկորին կոտրած երկու մասերը իրարու վրայ չչփուլին և ցաւ չպատճառեն :

Հիւանդը պատգարակին վրայ հանուեցնելու է, և թէ վնասուած մասը բազկոսկրն է նախ առողջ կողմի թեւէն պէտք է քաշել զգեստները և յետոյ վնասուած կողմէն : Նոյնը պէտք է նկատի ունենալ հիւանդը հազուեցնելու պահուն :

Վիրաւոր մը իր տեղը դնելու համար՝ զայն շատ զգուշութեամբ վերցնելու է : Հիւանդապահներէն մին ձեռները տակէն սահեցնելով միեւնոյն ստան երկրորդ մը անոր դէմ կեցած պիտի բռնէ առաջնոյն դաստակները : Անգամ մը վերցնելէ վերջ միեւնոյն կերպով անկողինը դնել և յետոյ անհրաժեշտ բոլոր միջոցները գործադրել, նախ քննել անոր բազկերակը, առնել ջերմութեան աստիճանը, հակել անոր աղիքներու կանոնաւոր գործունէութեան վրայ, զիտել թէ յուզուած է հիւանդը և ուրիշ նմանօրինակ կարգ մը զննութիւններ հաւաքելով բժիշկին ներկայացնել . հիւանդապահին այդ զննութիւնը մեծապէս բժշկին պաշտօնը և քննութիւնը կը դիւրացնէ :

Սեղան ( Table ) . — Ամեն հիւանդ իր սնարին մօտ մասնաւոր սեղան մը ունի որուն վրայ դրուած են դեղի սրուակը ջուր շիշն ու գաւաթը և այլն :

Հիւանդին միզամանը պէտք է ծածկուած պահել և օրը մէկ քանի անգամ լուալ ու հականեխել կարգ մը հիւանդութեանց, մանաւանդ հնատախի (cholera) ի մէջ :

Կապերտ . — Կապերտները, գամուած գորգերէն (tapis) նախընտրելի են, անոնք դիւրութեամբ թէ կարելի լուալ և թէ հականեխել, մինչդեռ միւս գորգերը սոյն առաւելութիւնը չունին :

Մաքրութեան խնամք . — Մաքրութիւնը անշուշտ միայն հիւանդին վրայ չէ որ պիտի կիրարկուի, կարեւոր է որ հիւանդապահները և հիւանդապահուիները խիստ հոգածու գտնուին իրենց անձին մաքրութեանը . հիւանդանոցի

պաշտօնէութիւնն է որ իր ամբողջութեամբ մաքրութեան կենդանի օրինակը պիտի ըլլայ :

Հիւանդին մորթի մաքրութեան մեծ կարեւորութիւն պէտք է ընծայել . արդէն տեսանք դաստիասութեան սկիզբը թէ՛ մորթը իրվրայ գտնուած ծակտիկներուն շնորհիւ մորթային շնչառութեան կը ծառայէր : Յաճախ ուրեմն լողանք պէտք է ընել , մարմնոյն ծակտիկները բանալու և մորթային շնչառութիւնը ղիւրացընելու համար :

Հիւանդին մարմինը գողջ ջրով , օճառով պէտք է լուսայ ալյակտով աղտեղութիւնները կը մաքրուին և հիւանդը կը հանգստանայ :

Վերջապէս ձեր խնամոց յանձնուած վիրաւորներու և հիւանդներու հանդէպ ձեր առաջին դործը պիտի ըլլայ մաքրել վերքերը և ուշադրութիւն ընել ձեր խակ ձեռքերուն , եթէ մորթին վրայ բացուածք մը կայ (porte entrée) կրնաք անուշադրութեամբ վտանգաւոր հիւանդութեամբ մը վարակուելի՝ մանաւանդ ֆրանկախաւորները գարմանած ատեննիդ : Նմանապէս թոքոխտաւորներ և միքրոպային զանազան հիւանդութիւններ խնամած ատեննիդ պէտք է գոց բանել բերանը և զգուշանալ շատ խօսել :

Հիւանդէ մը ուրիշ հիւանդ մը այցելած ատենիդ լուսոցէք ձեր ձեռքերը : Նամանաւանդ կեղծմաշկէ (diphthérie գուշ պօղան) վարակուած հիւանդ մը խնամած ատեննիդ ճաշկէ առաջ պէտք է ձեր բերանը լուսաք :

Հիւանդները միշտ միեւնոյն դիրքով պէտք չէ պառկեցնել , այն որ միշտ կռնակի վրայ կը պառկի վէրքերը կը բացուին և փափստ յառաջ կուգայ :

Հիւանդին մորթէնդատ բերնին մաքրութեան ևս խնամք պէտք է տանիլ , մանաւանդ տենդային հիւանդութեանց պարագային . ժանտաւանդի մէջ (fièvre typhoïde) շրթունքները , ալուանները պէտք է մաքրել : Ասոր համար 1 քիլօ ջուրին մէջ 5 gr. bicarbonate de soude) կը լուծէք և քիչ մընալcool de menthe կ'աւելցնէք . լուսացումը պէտք է ընել զլուխը վար ծռած և սակը աման մը (cuvette) դրուած :



Երբ այսպէս հիւանդին բերնին ու յարակից մասերուն մաքրութեան խնամք տարուի, այն ատեն հիւանդը դեղեր ընդունելու համար դժկամակութիւն ցոյց չտար :

Երբ հիւանդ մը շատ նիհար, տկար է և ի վիճակի չէ մինչև իսկ գլուխը վեր բարձրացնել, այն ատեն դուք պէտք է վեր բարձրացնէք անոր գլուխը և ուսերը, ձախ ձեռքերնիդ բազուկին տակէն կ'անցնէք և միւս աջ ձեռքով՝ զգալը կամ գաւաթը բերանը կը դնէք որպէսզի կարենայ խմել : Երբեմն հարկ կ'ըլլայ մասնաւոր ծծիչներ գործածել : Յետոյ հիւանդին գլուխը հանդարտօրէն կամաց մը պէտք է դնել բարձին վրայ :



### Բ. Կ Ա Ս

#### ՀԻՒԱՆԴԱՊԱՇԻ ԴԵՐԸ ՀԻՒԱՆԳԻՆ ՀԱՆԳԷՊ

Երբ ներքին կոչումով մը գթասիրական ոգևով մղուած կը փափաքիք հիւանդապահութեան ասպարէզին մէջ, հիւանդներու և վիրաւորներու ծառայութիւն մը մատուցանել նուիրուեցէ՛ք ձեր պաշտօնին : Առաջին առթիւ թէեւ այդ գթասիրական պաշտօնը դժուարին և անհաճոյ պիտի թուի ձեզ, սակայն պիտի սիրէք զայն որովհետեւ հոն մարդասիրական վսեմ նպատակ մը կայ : Ձեր պարտականութիւնը պիտի կիրարկուի համբերատար, քաղցրաբարոյ, հանդարտ և լուրջ եղանակով . ձեզմով պիտի ուրախանան արուր հոգիները . մի կարծէք որ ճշմարիտ լրջութիւնը դէմքի խոժոռութեան և թախծութեան մէջ կը կայանայ, ժպիտն ու խինդը չեն նսեմացնէր լրջութիւնը, ընդհակառակը՝ զայն աւելի հաճելի և տանելի կ'ընծայեն, մանաւանդ տառապող հիւանդներու : Շատ իրաւամբ ըսուած է՝ «Ուրախութիւնը փոխանցիկ է» . զիտցէք թէ հիւանդները ձեզի հետ հոգեկան միեւնոյն կեանքը կ'ապրին, ձեզի հետ կը արտմին և կը հրճուին, հետեւաբար եղէ՛ք միշտ ժպտաչրթուն և զուարթ :

Չեր ստանձնած պարտականութիւնը սիրով պէտք է կատարել, սէրը աշխատութեան խթանն է. սիրելով ձեր պաշտօնը՝ զայն հաճոյալի և հանդուրժելի պիտի դարձնէք: Գիտցէք թէ աստուպող հիւանդին միայնութեան մէջ սէրը և գութը քաղցր մխիթարութիւն մը կը կազմեն:

Չեր աշխատութիւնը ծանր, կանոնաւոր և սուսնց անօգուտ շարժումներու կատարեցէք, միշտ զգուշանալով փոքր շշուկ մը իսկ յարուցանելէ. ժխտը հիւանդը կը յոգնեցնէ և կը ջղայնտաէ: Հիւանդանոցի մէջ մետաքսեայ զգեստներու «ֆրու ֆրու»ն, զարդեղէններու և համրիչի նեղացուցիչ շղորտուքը, ինչպէս և բարձրարունգ կօշիկներու գործածութիւնը սնթոյլատրելի և անպատշաճ է: Երբ ձեր աշխատութեանց պատճառով իրապէս յոգնած, ընկճուած էք, զգուշացէք զայն արտայայտել հիւանդաց ներկայութեան որովհետեւ շատ յոռի տպաւորութիւն մը կը թողուք անոնց վրայ:

Հիւանդաց քով ձեր բարոյական ազդեցութիւնը բարձր պահելու համար եղէք վճռական և հաստատամիտ. եթէ վրճաւականութեան և հաստատամտութեան միացնէք կարգ կանոնն ու մարտութիւնը՝ վստահ եղէք թէ կատարելապէս պիտի յաջողիք:

Հիւանդապահի դերը հիւանդին սնարին մօտ.— Հիւանդը առանձին պէտք չէ թողուլ, հսկեցէ՛ք անոր մտորին մօտ, եթէ ան շարժմամբ մը ձեզ իր մօտ կը կանչէ՝ փութացէք և գոհացուցէք զինքը:

Հիւանդի հարցուփորձը փափկանկատօրէն կատարեցէք. քնոյ պահուն արթնցնելու չէ զինքը. երբ զրգոռած ու յուզուած է հնարամտօրէն իր միտքը տարրեր ուղղութեամբ մը լարեցէք մանաւանդ երբ ան պէտք է քնանայ ու հանգստանայ:

Ձառանցանքի պահուն պազարիւն և հանդարտօրէն շարժեցէք, առանց վախ և յուզում արտայայտելու, վասնզի երբ հիւանդաց կողմանէ անզամ մը հիւանդապահին երկչոտութիւնը զգացուի՝ այն ատեն արահին մէջ բոլորովին կը փճա-

A II  
59614

նայ իր հեղինակութիւնը : Միւսնոյն տակն , հիւանդաց ար-  
ժանապատուութիւնը վիրաւորող վարմանքնկրէ մեծապէս  
դժուր ելէք : Ախտաբանական անախորժ տեսարանի մը առ-  
թիւ հիւանդապահին զգուանքի և դարչանքի արտայայտու-  
թիւնը խորապէս կը վիճաւորէ հիւանդին նոյլն և յուսահա-  
տացուցիչ սպաւորութիւն մը կը թողու :

Հեռատես հիւանդապահը պէտք է կարենայ նախատեսել  
հիւանդին բարձանքնկրը և զանաք համեմատելով անոր ա-  
ռողջական վիճակին հետ՝ գոհացնէ կամ մերժէ , անշուշտ այս  
վերջի պարագային շատ փափկութեամբ վերաբերուելով :


Հիւանդապահը երբեմն փոքր գոհացումներ կրնայ ստղ  
հիւանդին խնդրանքին վրայ միշտ խոհեմութեամբ և նրբա-  
մասութեամբ շարժելով :

Հիւանդը հազուեցնելու և հանուեցնելու մէջ զգուր և  
խոհեմ գանուեցէք . մի ննթադրէք թէ այս շատ պարզ և  
դիւրին գործողութիւն մըն է : Հիւանդը պէտք է հանուեցնել  
աւանց գոյն սեղափոխելու և փոքր ցու մը խակ առթելու :

Երբ անգամներուն միոյն վրայ վէրք մը գանուէ , նախ  
գործողութիւնը առողջ կողմէն սկսիլ և յետոյ հիւանդ մասէն  
հազուեցնելու առնն բոլորովն հակառակ կերպով շարժիլ .  
նախ հիւանդ մասէն և յետոյ առողջ մասէն հանուեցնել . միշտ  
հոգածու կղէք որպէսզի հիւանդը հանուեցնելու պահուն  
չի մսցնէք :

Նիհարցած և տկարացած հիւանդին հետ յիշ մը բարձրէն  
խօսեցէք որպէսզի ան ձեզ լսելու համար գերադոյն և յող-  
նեցնող ճիգ մը ընել չստիպուի : Առատկցութիւնը պէտք է  
ըլլայ կարճ և յստակ , աւանց ընդգիմախօսութեան . համե-  
վի և սերախացուցիչ դէպքեր միայն պէտք է պատմել , զգու-  
շանալով յուսի նկարագրականներէ և շաղակրատութենէ :

Ծանր հիւանդութեանց պարաշային հիւանդը իր վիճակի  
մասին դէշ ննթադրութիւններ կ'ընէ . հոգեկան վիճակը բարձր  
պահելու համար համողիչ տմէն միջոյ պէտք է կիրառել և  
ապուքինման կատարեալ յոյս ներշնչել :



Հիւանդապահի անձնակազմի վարմունքը. — Կանուխէն հիւանդանոցներ յաճախեցէք արեան տեսքը հանդուժելու համար, շուտով պիտի սովորիք չզգածուիլ հիւանդի տանջանքներէն և քամահրիլ տխուր տեսարաններէ :

Հոգածու եղէք ձեր աննդառութեան, ճաշի պահուն երբէք մի նախընտրէք սուրճ մը կամ թէյ մը առնել՝ զբաղում, աշխատութիւն պատրուակելով : Ճաշէ առաջ և վերջը լուացէք ձեր ձեռքերը նամանաւանդ երբ վարակիչ հիւանդաներ է որ կը խնամէք ինչպէս թոքախտաւորներ, ֆրանկախտաւորներ, կեղծմաշկաւորներ, ևն. : Բերանը ճաշէ առաջ անհրաժեշտ է հականերտական ջրով մը լուանալ երբ ձեր հիւանդը կեղծ մաշկի ենթակայ է : Շարժական մէկ երկու անգամ լուանք առէք :

Ձեր պարապոյ ժամերը յատկացուցէք ընթերցանութեան, զանազան նիւթեղէններու տեղափոխութեան, առանին կարկառւոյններու և ձեռագործներու :

Հանգստանալու նպատակու փոխանակ երկտր ասան աթոռի մը վրայ մնալու՝ 10—15 վարկեան երկարեցէք բաղձոցի մը վրայ, այս կործ ժամանակամիջոցի հանդիսար շատ աւելի նախընտրելի և նպատակայարմար է :

Հիւանդապահութեան արուեստին կարեւոր պայմաններէն մին է առողջ կազմ, և ծանր աշխատութեանց վարժութիւն ունենալ, ինչպէս նաև լուս յիշողութիւն և ազնիւ նկարագիր :

Այցելութիւն հիւանդաց. — Հիւանդաց այցելութեան պահը կանոնաւոր պէտք է ըլլայ, այցելութեան և տեսակցութեան տեսողութիւնը հիւանդին առողջական վիճակին հետ համեմատական ըլլալու է :

Այցելուները, հիւանդին ճիշտ դէմը նստելով քիչ և յստակ պիտի խօսին առանց վիճաբանութեան, հակող հիւանդապահը այցելութեան պահուն լուրջ ուշադրութիւն պիտի ընէ որ երբ անոնէ թէ՛ հիւանդը յոգնութեան նշաններ ցոյց կուտայ պէտք է փութայ խօսակցութիւնը դադրեցնել :

Ապաքինում. — Հիւանդապահի դերը խիստ կարեւոր է

այս շրջանին մէջ . հիւանդին վերջնական առողջացումը սպա-  
քինման ընթացքին իր ստացած ինամփէն կախում ունի ,  
յստի ինամփի արդիւնք՝ շատ անգամ հիւանդութիւնը կը  
կրկնուի և մինչև և իսկ մաս՝ յառաջ կրնայ դալ :

Այս շրջանին մէջ , մասնաւորապէս խիտ հսկողութիւն  
պէտք է ընել անդառութեան վրայ , հիւանդութեան ընթաց-  
քին մարսողական գործարանը կորսնցուցած էր իր բնակա-  
նան և առողջ գործունէութիւնը . հիւսիսարտադրութիւնը խան-  
գարուած էր , ուրիմն հազիւ բնականոն վիճակը վերստացու  
այս գործարանի նկատմամբ մեծ զգուշութիւն և ինամփ  
պէտք է ցոյց տալ : Բժիշկին կողմէ յանձնարարուած անդե-  
ղէններ միայն ստիպ է քիչ քանակով և ընտիր սրակու , հի-  
ւանդին յանձնարարել որ լաւ և հանգարտ ծամէ անունը :

Ճաշը սրաչ պահելու պէտք է առնել . կրբ պատահի որ  
հիւանդը սրաչեայ ժամուռն չկարողանայ ճաշել , ուստի կրբ  
հիւանդին քով պէտք է թողուլ , այլ գոյն տանիլ և յարմար  
առիւ վերատին բերել :

Կերակուրները խոճանոցէն փութով հիւանդանոցի սրահը  
պէտք է փոխադրել սրաչեղի պաղելով հիւանդին անտխարժ  
չիւնն :

Այս ինամփը պէտք է տարածել անխախտ բոլոր գործա-  
րաններու վրայ որոնք բոլորն ալ իրենց խանդարեայ դոճնե-  
ութենէն նոր կ'սկսին վերադառնալ բնականոն վիճակին :

Ապտրիսեակները որուան մէջ մերթ ընդ մերթ պէտք է  
հանգստանան ու քնանան , քունը անհրաժեշտ է ջլալին  
դրութեան դօրացման համար . քնոյ չնորհիւ ջլալին դրու-  
թիւնը կը վերակենդանանայ որով և իրեն ենթակայ միւս  
բոլոր գործարաններն ալ կը բարւոքուին :

Ասոնց մկաններն շատ շուտ կը յոգնին և ուժաթմայի կ'ըլ-  
լան , կրբ սենեակին մէջ կարճ պառոյաներուն սկսած են , փափ-  
կութեամբ պէտք է վարուել անոնց հետ և միշտ զգուշանալ  
նկղացուցիչ խօսակցութիւններէ :

Յոգնութիւն պէտք է զգայ . ան հիւանդին հազիւ վեր-

ստացած ոչժը ի զուր տեղը կապառէ և ջերմութիւն յառաջ կը բերէ :

Ապաքինեալը այս շրջանին իր տկարութեան պատճառով ուղեղային անարիւնութիւն (anémie cérébrale) կ'ունենայ, որուն հետեւանօք նուաղումներ յառաջ կուգան, անոնք ընդհանրապէս յանկարծական ուժգին շարժման մը կամ յուզման մը կը յաջորդեն : Փոքր անմարսողութիւն մը, սնունդի նուաղութիւն կամ չափազանցութիւն նուաղում յառաջ կը բերեն :

Պէտք է բնական պէտքերու կանոնաւորութեան վրայ հսկել և իր տեղեկութիւնները մի առ մի նօթագրելով բժիշկին ներկայացնել :

Մինչև այժմ ուրեմն ստիլեցաք, հիւանդը գթութեան հարկին մէջ ընդունելով, անոր հանդէպ գուրգուրոս և ազնիւ վերաբերմունքով և բնութեան բարի տշակցութեամբ յաջողիլ առողջացնել գոյն և իր ընտանեկան օճախը վերադարձնել :

Հիւանդին առողջացումը ուրախացուցիչ պարագայ մըն է. բայց աւա՛ղ շատ անգամ կը պատահի որ գիտական ամեն միջոց չեն յաջողեր դաժան հիւանդութեան դէմ և դժբախտ էակները հետու իրենց սիրելիներէ, գթութեան քոյրերէն շրջապատուած՝ կուտան իրենց վերջին շունչը այդ տխուր շէնքին մէջ : Հիւանդապահներ, գիտցէք որ ձեր դերը չի դադարձ մահամերձի մը անարին քովն իսկ : Երբ ընտանեկան հարկի մէջ է որ կը դանուիք ողբուկոծի մէջ պէտք է պահել իր պաղարիւնութիւնը : Կեցուածքով, շարժումներով, ձայնի հանդարտ ելեւեջներով այնպէս ենթադրել տալ օրհասականին պարագաներուն թէ՛ ամէն միջոց մինչև վերջի վարկեանը ի դորձ կը դրուի անոր կեաքը փրկելու համար : Տնեցիներէն շատերը այս դժուրակ վայրկեաններուն օրհասականին կը մօտենան և զայն կօչելով կը հարցնեն .— զիս նանչցա՞ր, այնպէս չէ՞, ես խաբուն հանրմն եմ և հէք ոգելարը իր կապարի պէս ծանրացած կոպերը ինչպէս երախտագիտութեան, դժուարու վեր կը բարձրացնէ և նուաղկոտ ակնարկ մը հազիւթէ կը նետէ իր շուրջ ու կիյնայ ընդարմացման մէջ : Երբեմն յանկարծ

մահամերձին չնշառութիւնը կը դադրի, զիմազիծը կ'այլափոխի և երեւութական մահ մը յառաջ կուգայ, ահա կըսկսի ողբուկոծը. Ախ մեռաւ, լմնցաւ, բացազանչութիւններով, մինչդեռ հէք հիւանդը, մեռած չէ տակաւին, իր վերջի բոպէններուն կը լսէ իր մահը լացող սրտամորմոք աղաղակները և այս իրեն համար վերջին քաղցր մխիթարութիւնն է. մահամերձը երկու բան կը խնդրէ նախ՝ կեանք ապա՝ լացող մը իր վրայ:

Հիւանդանոցի մեջ.— Մահամերձին անկողինը սուսանով մը գոցել, վայրկեան մը իսկ չի հեռանալով քովէն. վսեմ և յուզիչ պարտականութիւն մը պիտի կատարէք կեանքի և մահու մէջ տարուբերող հէք մահամերձին նկատմամբ: Պիտի լսէք անոր վերջին խոստովանութիւնը և դաղանիքները. պիտի կատարէք իր վերջին յանձնարարութիւնը: Մահամերձը հոգեկան գոհացմամբ պէտք է տայ իր վերջին շունչը:

Երբ մահը կը հաստատուի փութով բժիշկին իմացնել, որպէսզի ստուգելով զայն իր կողմէ ստորազրուած տեղեկագրով մը դէպքը անօրէնութեան յայտնէ՝ պաշտօնական և վարչական անհրաժեշտ ձեւակերպութիւնները լրացնելու համար:

### ՄԱՀ ԵՒ ԻՐ ԳԼԽԱՒՈՐ ՆՇԱՆՆԵՐԸ

Մահը երկու կերպով յառաջ կրնայ գալ, յանկարծական կամ դանդաղ ընթացով: Յանկարծական մահը ուղեղային արիւնտանոսութեան մը կամ յոնկարծական անկման մը, բախման մը (traumatisme) հետեւանօք կ'ըլլայ ընդհանրապէս, իսկ գանդաղ ընթացքով մահը ողբվարքով կը յայտնուի:

Իրական մահը հետեւալ նշաններով կարելի է ստուգել Ա. բարեխառնուրեան նուազում.— Յետնազիէն ջերմոչափ մը կը գնենք և բարեխառնութեան տախիճանը կ'աւանսք. այս գործողութիւնը կը կրկնենք մէկ քանի անգամ և երբ 25<sup>0</sup> էն միշտ վար և անփոփոխ է մահուան վստահ կրնանք ըլլալ: Բ. շնչառական շարժման եւ բազկազարկի դադարում.— Որովայնային կամ լանջային որ և է շարժում չի նշմարուիր. բազ-

կազարկը բուրբովին դադրած կ'ըլլայ: Գ. դիակնային կարծրութիւն (rigidité cadaverique). — Մարինը մահէն վերջ կ'սկսի կարծրանալ և շոշափմամբ կ'զգանք այդ կարծրութիւնը: Ժողովրդական անբաւարար միջոց մը ևս կայ, զոր սակայն կարելի է կիրարկել. բերնին տոջև հայելի մը դնել. երբ ան ջրաչողիով թեթեւօրէն ծածկուի, կը նշանակէ թէ իրական մահ մը չէ:

Երբ այս նշաններով մահը վերջնականապէս հաստատուած է. մեռելային որովայնին վրայ կանանչորակ դոյն մը յառաջ կուզայ ինչ որ փառութեան նշան է:

Հիւանդապահի դերը մեռելային հանդէպ. — Այս պարագային հիւանդապահը կարևոր պարտք մը ունի կատարելիք, հանուեցնել մեռելը, տարածել դոյն սաւանին վրայ, լուալ մարմինը և յետոյ փոխադրել մեռեալներու սրահը, բժիշկին կողմէ որոշուած պահուէն: Երբ վէրք մը կայ վերցնել վիրագարմանիւթը (pansement) և մաքուր ջրածծող (hydrophile) բամբակ մը դնել և կապել. երբ մարմնոյն վրայ մէկէ աւելի վէրքեր գտնուին՝ գտնոնք բամբակէ խցանով փակել:

Այս գործողութիւնը լրացնելէ յետոյ, սրահ վերադառնալ, վերցնել մահճակային կաղամածները և փուլթով հականկախան ամէն միջոց ի գործ դնել:

Մարմինը 5 % chlorure de zinc ի կամ 5 % acide phénique ի լուծաջրով լուալ: Անկողնին կաղամածները, որոնք հիւանդին հետ մշտական շփման մէջ էին, 1 % chlorure de zinc ի կամ 2 % acide phénique լանջքին մէջ մխրճել: Սրահն ալ կարելի եղածին չափ պէտք է օդաւորել, գոցել մեռելին աչքերը՝ արակտնուէնքները թեթեւօրէն ճնշելով. երբ այս գործողութիւնը յապաղի, դիակնային կարծրութիւնը յառաջանալով կարելի չըլլար յետոյ այս գործողութեան մէջ յաջողիլ:

Զգեստները ինտամով հանել և անուշահոտուած լուծաջրով մը լուալ, երկար և ճերմակ շապիկ մը հագուեցնել և մեռելաստաննով մը ծածկել: Հիւանդին անունը, մահուան թուականը, հիւանդութեան անունը կրող քառթ մը գնդաակով վրան փակցնել:



Հիւանդապահը, հիւանդին լողամանէն ելլելէն անմիջապէս վերջ յեանադիէն բարեխառնութեան աստիճանը առնել և երեք ժամը անգամ մը միշտ այս գործողութեամբ նշանակել հիւանդին ջերմութեան աստիճանը :

Բժիշկներէն շատեր կը յանձնարարեն երեք ժամը անգամ մը կրկնել լողանքը երբ ջերմութեան աստիճանը 39<sup>0</sup> էն վեր է :

Համառօտիւ պիտի յիշեմ ձեզ ամէնէն կարևոր դեղային լողանքները :

1<sup>0</sup> Ալքալէն լողանք. — (Bain alcalin). — մէկ լողանքի համար 25 gr. Carbonate de potassium զնել :

2<sup>0</sup> Նշայի լողանք. — (Bain d'amidon) 25 gr. նշայ (amidon) 6 լիդր ջրի մէջ հալեցնել և այս լուծաջուրը թափել լողամանին մէջ :

3<sup>0</sup> Հոտաւէտ լողանք (aromatique). — 12 լիդր տաք ջրի մէջ 100 gr. espèces aromatique զնել : Հիւանդը ժամ մը պէտք է մնայ լողամանին մէջ . —

4<sup>0</sup> Աղային լողանք (Bain de sel marin). — Ստորական խոնանոցի ազով լողանքն է . 1000 gr. աղ մէկ անգամուան համար .

5<sup>0</sup> Մանանեխի լողանք (Bain de moutarde). — 1000 gr. մանանեխի ալիւր բարակ լաթէ պարկի մը մէջ լեցնել և յետոյ լողամանին մէջ դնել . հիւանդը երբ մանանեխի լողանքին մէջ մանէ, լողամանին վրայ հաստ սաւան մը ծածկել որպէսզի հիւանդին դէմքը պահպանուի մանանեխէն յառաջ եկած գրգռիչ շամանթազներէն :

6<sup>0</sup> Թեփի լողանք. — (Bain de son) 1000 gr. թէփ բաւարար քանակութեամբ ջրով եռացնել քառորդ ժամու չափ յետոյ այդ ջուրը լողամանի մէջ լեցնել :

7<sup>0</sup> Սիւլլիմէ քօռօզիֆի լուգանք. — Մասնաւոր շիշի մը մէջ գլուած է սիւլլիի մէկ լողանքի մը միայն յատուկ լուծաջուրը, — Շիշին վրայ անպայման, դեղագործին կողմէ լուծաջրին անունը պարունակող պիտակ մը փակցուած պէտք է ըլլայ :

Այս լողանքին ծառայող լողամանը փայտէ կամ զինկօէ պէտք է ըլլայ :

8<sup>o</sup> Ծծմբային լողանք . (Bains sulfureux) .— Փայտէ կամ զինկօէ լողամանին մէջ 100 gr. (trisulfure de potasse) զնկ . մէկ լողանքի համար :

### ԵՆԹԱՄՈՐԳԱՅԻՆ ՆԵՐԱՐԿՈՒՄ (Injection Hypodermique)

Կարգ մը զեղեր կան , սրնոց ազդեցութիւնը անմիջական կերպով ստանալու համար զանոնք մորթին ներքեւ կը ներարկեն , ուրիշ շատ աւելի արագ կ'անցնին արեան մէջ : Մորթին տակ բջջային հիւստեամ մը կայ որ մորթը աւելի խորը զանուած հիւստեամի մը հետ կը միացնէ , զեղերը այս վերջի մասին մէջ միայն պէտք է ներարկել :

Ներարկումը ընդհանրապէս բժիշկը անձամբ է որ կը կատարէ , բայց երբեմն այս պաշտօնը ձեզի ալ կը վստահուի :

Դեղալոյժը բրավաի ներարկիչ անուամբ մասնաւոր գործիքով մը կը ներարկուի . աւելորդ կը նկատեմ ձեզ բացատրել անոր կազմութիւնը քանի որ զայն գործնական կերպով հոս կը ցուցնեմ : Ամէն անգամ գործածելէ վերջ պէտք է հակահիսել գործիքը :

Ներարկիչները զանազան պարունակութեամբ կ'ըլլան . ոմանք 2-3 խոյն . սանդ . տարողութիւն ունին . արուեստական շիճուկներու (Serum) ծառայող ներարկիչները 20-30 gr. պարունակութիւն կունենան :

Հիւանդապահը , ներարկիչը լեցնելէ առաջ այդ լուծուցուրը պարունակող շիշին պիտակը պէտք է կարգայ տեսելու համար թէ բժիշկին յանձնարարութեան համապատասխան է թէ ո՛չ . —

Գործողութեան սկսելէ առաջ խնամով հակահիսելք ձեր ձեռքերը . ներարկելի մասն ալքօլով կամ էթէռօլ մուքրել . ասեղը բացալառելէ վերջ միայն ներարկումը կատարել :

Գործածուած դեղը , քանակը եւ ներարկման անոցը կանխաւ բժիշկին կողմէ յայտնուած պիտի ըլլայ . ներարկման մէջ ընդհանրապէս հետեւեալ դեղերը կը գործածուին :

Cocaïne morphine կը ներարկեն խիստ ցաւերը մեղմացնելու համար :

Ergotine Արիւնահոսութիւնը դադրեցնելու համար :

Caféine Huile-camphré éther sulfrique. Հիւանդին կազմը զօրացնելու համար կը ներարկուի :

Կարգ մը հիւանդութեանց դէմ հակազդող բուժիչ ներարկումներ ևս կը գործածուին . ինչպէս Բակակեղծմաշկային շինուկը (Serum antidiphthérique) Բակապրկախտային շինուկը (Serum antitétanique) :

Այս ներարկումները պէտք է կատարել սրովայնի, զիստի և բազուկի դուրսի կողմին վրայ :

### ԳՐՆՆ (Lavement)

Գրեխը լուծաջրի մը յեանաղիէն աղիքներու մէջ ներարկումն է . ներարկելի հեղուկին քանակին հասեմտա գրեխը կը կոչուի . քառորդ կես .— ամբողջ :

Քառորդը 125 gr. է կէսը՝ 250 gr. ամբողջը 500 gr. է : Երբեմն լուծաջրին քանակը մէկ քանի լիդրի չափ կըլայ ինչպէս աղեաց խցման (obstruction intestinale) մէջ : Բայց աղիքներէն ծծուելու նպատակաւ ներարկուած դեղաջուրը 125 gr. ը պէտք չէ անցնի : Երկու նպատակաւ նախ՝ սրպէս զի աղիքները կարենան հեղուկի այդ քանակին հանդուրժել , յետոյ՝ կարողանան ծծել դայն :

Գրեխներու տեսակները.— Գրեխները կըլան պարզ գեղային սննդական :

Առաջինը մաքուր պարզ ջրոյ կամ կտաւտաի խաշած ջուրով (քէթէն թոհումի) (grain de lin) կը կատարուի իրբեւ կակղեցուցիչ (émollient) կամ ժողովրդական լեղուով թուլացնող (laxatif) կը կոչուի :

Դեղային գրեխները սովորական ոռոգիչով կը կատարուին ոմանք կըլան սեղմիչ (astringent) այլք հանդարանցուցիչ (calmant) :

Դեղային լուծաջրին մէջ ընդհանրապէս կը գործածուին sulfate de soude (ինկիլիզ թուղու) .— քաղցնի (glycerine laudanum.

Աննդական գրիխ.— Ազիքները լուս մը մաքրելէ վերջ, աննդական լուծածուրը ներարկել որ սովորաբար կը բազկանայ մտի ջուրէ, կաթ, գինի, բէրթօն: Այս գրեխները, ընդհանրապէս գաղջ կըլլան և 300 gr. ը պէտք չէ անցնի. երբեմն կը յանձնարարուի պաղ ջրով կատարել այդ աննդական գրեխը:

Գրեխներու համար կը գործածուին կարգ մը գործիներ որոնց ամէնէն սովորականը (ինկլարկոն կլիզիկ) կօչուածն է զոր անս ցոյց կօւտամ ձեզ. կայ ևս այլ գործիներ (ինկլարկոն սեզ մարֆ) և այլն: Ոռոգիչին (irigatoire) ծայրափողը (canule) նախ պէտք է իւզոտել վազըլինով կամ կլիսէսինով. ճիւղանցը պատկեցնել անկողնոյն ծայրը ոջ կողմի վրայ, մարմինը թեթեօրէն առջև հակած. քանիւր մտցուցէ՛ք ոչ թէ ուղղակի դէպի վեր այլ դէպի վերև առաջ 2-3 ս. խորութեան մէջ. երկրորդ շարժմամբ մը քանիւր մղել դէպի վերև ևս. այս ձեւով առանց ընդիմութեան նպատակին կարելի կըլլայ համելի:

Երբ այս հրահանգին համաձայն չի կատարէք գործողութիւնը, աղիքին մէջ արդելքի մը հանդիպելով կրնաք զայն վերադարձնել:

Երբ քանիւր լուս մը յաննաղիւն ներս մտու այն տանն լուծածուրը պարունակող գլանին ծորակը կը բանանք և ջուրը կ'սկսի հոսիլ:

Երբ աղայոց գրեխը կատարելու պահան դժուարութեան մը հանդիպիք՝ այն տանն ծայրափողին ծայրը 15-18 cm. երկայնութեամբ սօնա մը անցուցէք և կրեխը այսպէս կատարեցէք և կ'իւրու կը յաջողիք: Հիւանդը անձամբ իսկ կրնայ գրեխը կատարել:

Տղայոց յաննաղիւն մէջ զանուած փոքր որդերը սպաննելու համար աղի ջրով պէտք է գրիխ ընել: Սաստիկ փորհարութեանց և աղիքային արիւնհոսութեան մէջ opium (աֆիօն ըւն) ի գաղջ կամ պաղ գրեխներ կը կիրարկուին հետեւեալ բաղադրութեամբ. —

amidon 60 gr.  
Landanum XXX gouttes.

Հիւանդին միշտ պէտք է պատուիրել որպէս զի հեղուկը իր մէջ որքան կարելի է երկար պահէ. հիւանդապահը այս պարագային պէտք է օգնէ սրբիչով մը ճնշելով անոր սրբանը :

### ՅՐՏԱԳՄԱՆ (Réfrigération)

Յրտացման նպատակն է, մաքառելի մարմնոյն մէկ մասին վրայ դանուած բորբոքման դէմ եւ նուազեցնել նոյն տեղի տաքութեան սաստկութիւնը. ջրտացումը մասնաւոր Սառապարկով (Vessie à glace) մը կը կատարուի զոր անա ձեզ կը ցուցնեմ :

Սառապարկը ուղղակի մսին վրայ չպիտի դրուի այլ պարկին եւ մորթին միջեւ Ֆլանէլ մը պէտք է զտուի :

Այս պարկը ինկապատակաբորբոքման (ménéngite) մէջ զլխուն վրայ կը դրուի, ժանտասնդի (Fièvre typhoïde) մէջ՝ որովայնին վրայ, ինչպէս նաև աղետապի (appendicite) եւ փորմաշկատապի (péritonite) մէջ :

### ԿԱԹԵՅՈՒՄ (Instillation)

Գործողութիւն մըն է, որով զեղալոյձէ մը քանի մը կաթիլ կը կաթեցուի մարմնոյն փափուկ եւ զգայուն մէկ մասին վրայ :

Այս հեղուկը կրնայ ըլլայ հանդարտեցուցիչ (calmant) կամ կակեցուցիչ (caustique) : Աչքին եւ ականջին մէջ է որ ընդհանրապէս կ'ըլլայ այս կաթեցումը մասնաւոր գործիքով մը որ կաթեցուցիչ (compte-goutte) կը կոչուի :

Աչքի մէջ կաթեցման պահուն հիւանդին ղլուխը ետեւ ծակ՝ արտեւանունքները իրարմէ հեռացնել եւ աչքին անկեան մէջ կաթեցնել, յանձնարարելով հիւանդին որ աչքին գունդը չարժէ հեղուկը ամէն կողմ տարածելու համար :

Ականջի կաթեցման համար, հիւանդ ականջին՝ հակառակ կողմը ծակ զլուխը որպէս զի հեղուկը կարենայ ականջին մինչեւ ներքին մասին մէջ երթալ :

### ՕՆՄԱՆՈՒՄ (Onction)

Իւզային թանձր կազմութեամբ ղեղախառնուրդ մը մարմնոյն հիւանդ մասին վրայ կը քսուի, կը շփուի, զայն կակ-

շէկնելու եւ բուժելու նպատակաւ . այս գործողութիւնը անսօժանում կ'ըսուի :

Fomentation (Ջեռուցում) . — Գործողութիւն մը որով մարմնոյն որ եւ է մէկ մասը չոր կամ խոնաւ ջերմութեան կ'ենթարկուի : Չորին նպատակն է մարմնոյն պողած մասը լաւ մը տաքցնել եւ այսպէսով պաշին զէժ տաք հակազդեցութիւն մը ընել : Հիւանդ մասին վրայ տաք լաթեր , ֆլանելով փաթթուած կղմինար , քառչուէ պարկերու մէջ լի տաք ջուր , քարակ աւազով լեցուն պարկեր կը դրուին :

Թաց ջեռուցման համար . տաք , պարզ ջրին կամ զեղալոյժին մէջ թաթիսուած լաթեր հիւանդ մասին վրայ կը դրուուին եւ հեղուկին շոգիացումը արգիլելու համար ալ վրան մոմլաթով (toilé ciré)ով կը ծածկեն լաթերը (compresse) : Իբր զեղալոյժ կը գործածուին eau de sureau (միւրվէրի ջուր) , eau boriquée , eau phéniquée եւն : Թաց ջեռուցումը գելուժի (entorse) , ճմրումի (contusion) պարագային կը կիրարկուի :

### ՏԱԾ (Cataplasme , Լարա)

Տաժի գործածութիւնը գրեթէ թողուած է . երբեմն կակզեցուցիչ տաժեր միայն կը յանձնարարուին , ինչպէս՝ կաուլաթի , ալիւրացած գեանախնձորի տաժեր :

Բժիշկին հրահանգին համաձայն տաժերու վրայ կարգ մը գեղեր կ'աւելցուին . 30-40 կաթիլ լավտանում (Աֆիօն ըսէ) ինչպէս նաեւ Baume tranquille, pommade belladoné եւն :

### ՆԵՐՇՆՁՈՒԹԻՒՆ (Inhalation)

Գեղերը փոխանակ ուղղակի մարտդական խողովակի ճամբով արուելու երբեմն փոշիացնելով շնչառութեան գործարանի միջոցաւ հիւանդաց ներշնչել կը արուի : Շնչառական գործարանի կարգ մը հիւանդութեանց մանուսանդ շնչանեղձութեանց մէջ շտա յաճախակի կերպով թթուածնի ներշնչումը (Inhalation d'oxygène) կը կատարուի :

Թթուածինը քառչուէ 20-30 լիդր պարունակութեամբ

պարկի մը մէջ կը դրուի սնոր կցուած է մասնաւոր խողովակ մը որուն շնորհիւ հիւանդը կը ներշնչէ թթուածինը :

### ՄՆՆԳԱՌՈՒԹԻՒՆ (Alimentation)

Շատ անգամ կարգ մը արգելքներու հետեւանօք հիւանդները կարելի չըլլար բնական ճամբով սնուցանել :

Կարգ մը ջղային հիւանդութեանց ենթակայ հիւանդներ, յիմարներ, շատ անգամ բերնէն սնունդ առնել խստիւ կը մերժեն :

Ասկէ զատ կրնայ պատահիլ որ մարսողական գործարանի ընթացքին բնական արգելք մը գտնուի, ստուգին (oesophage) ստամոքսի ստորածակին (pylore) ինչ և չն. վրայ :

Ուժաթափ, նիճար հիւանդներ ևս երբեմն կը դժկամակին բերնէն սնունդ ստանալ :

Այս տեսակ հիւանդները սնուող չի ձգելու համար կարգ մը միջոցներ հնարուած է. երբ մարսողական գործարանը իր վրայ որեէ բնական արգելք մը չի ներկայացնէր հիւանդը կրնանք ստուգային խողովակով (Tube d'oesophage) կերակրել :

Գործիքը, քառւորէ երկայն խողովակ մըն է, զոր հիւանդը կը կլէ. որոշ նշան մը ցոյց կ'ուտայ երբ ստամոքս հասնի :

Մնդառութեան այս կերպը (gavage) կը կոչուի :

Թոքախտաւորները ընդհանրապէս կը մերժեն բերնէն սնունդ ստանալ և այս մնդամերժումը աւելի կը տկարացնէ զիրենք և հիւանդութիւնը աւելի կը պատկանայ :

Gavageի միջոցաւ, մեծ քանակաւ փոշիացած միս, բանջարեղէն, հաւկիթ կը տրուի և բարեբախտաբար այն հիւանդները որոնք բերնէն փոքր քանակաւ իսկ սննդնդէն չեն կրնար ընդունիլ, այս միջոցաւ շատ զիւրութեամբ կը մարսեն իրենց ստացած սնունդները՝ առանց հազի և փսխունքի, ինչ որ յաճախողէպ կ'ըլլայ երբ հիւանդը դժկամակութեամբ բերնէն սնունդը ընդունի : Սնուցման այս կերպը ամէն առթիւ

կարելի չէ կիրարկել. արգելքին, պատճառին համեմատ կը փոխուի :

Երբ հիւանդը բերնին մէջ խիրդ (cancer) ունի, կամ լեզուէն կտրուած է. այն ատեն քթէն 16-18 սանդիմէթր երկայնութեամբ sonde մը մտցնել մինչեւ ստամոքս և հեղուկ սնունդը խողովակէն վար լեցնել : Երբեմն ո՛չ առջի և ո՛չ այս կերպը կարելի կ'ըլլայ գործածել և հարկ կ'ըլլայ դրելսի ձեւով հիւանդին յետուողիէն սնունդը ներարկել :

Ներարկուած յանձնարարելի եղանակը. — կաթին մէջ քաւնի մը դգալ բէրթօն, հաւկթի դեղին, 5 կաթիլ լալտանում և 0,50 cg. (bicarbonate de soude) : Այս սննդական դրելիք բժիշկին պատուիրած պահերուն միայն պէտք է կատարել :

### ՊԱՀՆՅՈՒՈՒԹԻՒՆ (Diète)

Պահեցողութիւնը սննդառութեան որոշ կարգի մը վերածուելը կամ սնունդի քանակին նուազումն է :

Պահեցողութիւնը պորագոյին համեմատ կ'ըլլայ :

Բացարձակ (absolue) իրեն կ'արդիւրուի որեւէ տեսակ սնունդ ստանալ :

Յարաբերական (Relatif). Այս բացարձակ արգելք մը չէ. այլ հիւանդին կարողութեան և աւրիքին համեմատական սննդառութիւն մըն է :

Չոր պահեցողութիւն (Diète sec). — Երբ արդէն ներքին հիւթարտադրութիւնը չափազանցուած է կարգիլուի հեղուկ սնունդներու գործածութիւնը :

Բուսային պահեցողութիւն (Diète végétale). — Բուսայիններու հետ կ'ընկերանայ կաթը, կաթնեղէնները ձկնեղէններն ևւն :

Սննդական այս բէժիմը կը յանձնարարուի յօղակաթուածէ (goutte) շաքարախտէ (diabète) ևւայլէ տառապողներուն :

Կենդանական պահեցողութիւն. — (Diète animale). — Բացարձակապէս մասշին սննդառութիւն մ'է որ նիհարցած ,



մաշած կազմերու զորացման համար կը կիրարկուեն ինչպէս նաեւ քրօնիկ փորհարութեանց եւ շաքարախտի մէջ :

Կարնային պահեցողութիւն (Diète lacté) .— Ամէնէն սովորական եւ կարեւոր պահեցողութիւնն է այս . 24 ժամուան ընթացքին կաթի քանակը մէկ քանի սուրճի դգալէն մինչեւ 3-4 լիդր կ'ըլլայ . կաթը ստէպ եւ փոքր քանակաւ պէտք է տալ : Շատ մը հիւանդութեանց մէջ այս կաթնային պահեցողութիւնը կը հրամայուի :

#### Գ. Գ Ա Ս

ԲԺՇԿԱԿԱՆ ՆԱԽ. ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԽՆԱՍՔ ՇԻՒՆԴՍՑ



Համառօտ ակնարկով մը պիտի բացատրեմ ձեզ ամէնէն յաճախադէպ հիւանդութիւնները որպէս զի կարենաք անոնց վրայ գոնէ ընդհանուր գաղափար մը ստանալ :

Ակսիք նախ՝ մորթային գործարանէն (appareil tégumentaire) .— Մորթը, կարգ մը հիւանդութեանց առթիւ գունաւորումներ կ'ստանայ ջրարիւններու (chlorose) քով մորթի գոյնը կանանչագեղ-գունատ է . նուազարիւնութեան (anémie) մէջ՝ գունատ-ածգոյն . խլիրզի (cancer) ենթականերուն մորթը յարդազոյն-գեղին է . թոքախտաւորներու, քաշէքթիքներու, ճահճային հիւանդութեանց մէջ մորթը հողազոյն գեղին կ'ըլլայ :

Վիրտուեժական գործողութեան մը եւ կամ ծննդաբերութեան ընթացքին երբ ծանր արիւնահոսութիւն մը պատահի մորթը յանկարծական կերպով կը գունատի . ուրեմն մորթի յանկարծական գունատութիւնը մեծ արիւնահոսութեան նըշանն է : Նմանօրինակ պորագային անհրաժեշտ է անմիջական կերպով գործի ձեռնարկել արուեստական շիճուկի (serum artificiel) ներարկումներ կատարել եւ միաժամանակ փութով բժիշկին իմացնել :

Սրտի հիւանդութեանց, հնտախտի (choléra) մէջ կանան-  
չորակ- կապտագոյն է մորթը. դալուկի (jaunisse սարըլըք)  
մէջ՝ դեղնագոյն իսկ անագապղնձագոյն կ'ըլլայ՝ թոքախտա-  
ւորներու մէջ :

Մորթը երբ զօրաւոր հարուած մ'ստանայ կամ կարծր  
մարմնոյ մը զարնուի կարմիր կապոյտ հետք մը յատաջ կու-  
գայ զոր կապտութիւն (échimose) կանուանենք: Այս կապ-  
տութիւնը, արտաքին ազդեցութիւններէ զատ կրնայ նաեւ  
ներքին հիւանդութեանց արդիւնք ալ ըլլալ. այս վերջի պա-  
րագային. փտախտ. (eschar) կը կոչուի: Բժիշկը երբ իրեն  
գիմող հիւանդին վրայ տեսնէ փտախտի այս նշանը, շուտով  
կը կուսէ թէ՛ ենթական երկար առեն անկողնոյ ծառայած է:  
Ապագայի այս վտանգը նախատեսելով, հիւանդը անկողնին  
մէջ ջրով կամ օդով լեցուն քառնուէ բարձրու վրայ պառ-  
կեցնել:

### ԺԱՅԹԻՔՈՒՄՆԵՐ (Eruption)

Ժայթքումները կարգ մը հիւանդութեանց ախտանիշ կը  
նկատուին ինչպէս հարսանիթի (rougeole, գըզամուխ) կար-  
մրախի (scarlatine, գըզըլ) մէջ:

Ժայթքումները ինքնորոշիչ յատկանշեր ունին որոնցմով  
կը զանազանուին անոնց համապատասխան հիւանդութիւն-  
ները:

Purpura.— (Բիււրուսա).— Ժայթքումներու խումբին  
մաս կազմող մորթային հիւանդութիւն մ'է. մորթին վրայ,  
գինիի մրուրի նման բիծեր յառաջ կուգան: Յօդատապէ տա-  
ռապողներու եւ չարախոնջութեան (surmenage) ենթակայնե-  
ներու ընդհանրապէս կը պատահի այս:

Gerçure.— (Ժէռսիւ).— Մորթային բաժանում մ'է. ա-  
ւելի շրթունքներու, ծիծերու պտուկներուն, ոտքի եւ ձեռքի  
վրայ յառաջ կուգայ: Իբր դարման՝ զուտ կլիսեոլին (glyce-  
rine) կամ կլիսեոլին թանինէ (glycerine tanniné) քսել:

Ulcère (Վէրք).— Վէրքը տեղական զրգուութեան մը հե-

տեւանօք յառաջ կուգայ. ոտքի կրակային ընդլայնման (Varice des jambes) մէջ մորթը բոլորովին բաժնուելով վէրք եւս յառաջ կուգայ :

### ՄԱԿԱՅՈՒԾԱՅԻՆ ՀԻՒՆՆԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Մորթը բազմաթիւ մակաբոյծ կենդանիներու ապաւէն կը ծառայէ, որուն հետեւանօք մորթային կարգ մը ժայթքող հիւանդութիւններ (maladies eruptives) յառաջ կուգան : Ատոնցմէ ամէնէն կարեւորները պիտի յիշեմ ձեզ :

(Գոնջութիւն) Teigne— : Բուսային մակաբոյծ մ'է որ իր աւերները կը գործէ մազերու եւ մորուքի մէջ . խիստ վաւերէ ըլլալով պարզ հպումով մը իսկ կը փոխանցուի : Մորթին վրայ բարակ կեղեւ մը կը կաղմուի, այս կեղեւին շուրջը կը բորբոքի եւ կը թարախոտի . փոքրերը աւելի ենթակայ են այս հիւանդութեան . ընտանիքի մէջ անգամ մը երբ վարակուի դիւրաւ կը վարակէ միւսները եւս :

Իբր նոխազգուշութիւն, առանձին պառկիլ, ուրիշի սանար, սրբիչ, խողանակ չի գործածել . հիւանդութեան պարագային մազերը ածիլուած պահել մինչեւ մակաբոյծին վերջնական անհետացումը . վարակուած մասը (pommade mercuriel) ու կամ (pommade d'acide phénique) ու օժանել եւ գլուխը ծածկել՝ մետաքսեայ գլխանոցով մը :

(Գոնջ) Phavus.— Ծնորհիւ առողջապահութեան կիրառութեան վերջերս հազուադէպ հիւանդութիւն մը դարձած է . մակաբոյծը մկաղբի գարշահոտութիւն մը կուեննայ . գժուար է դարմանումը :

(Գլխու ոջիլ) Poux de la tête.— Ոջիլը իր ներկայութեամբ քերուրուք կը պատճառէ . մասնաւորաբար կը դժուարի գլխու մազերուն մէջ եւ յաճախ impétigo կոչուած մորթային հիւանդութեան ալ պատճառ կ'ըլլայ : Գլխուն վրայ կեղեւներ յառաջ կուգան եւ անախորժ . աղտոտ փձակ մը կ'ստեղծուի : Կեղեւները հանել վրան տած (լաբա) զնելով եւ

յետոյ զլուխը onguent mercurielով կամ huile camphréeով  
օծանել :

(Գոս, ուլուզ) .— Gâle .— (աքար) acare անուն մակա-  
բոյձին պատճառած հիւանդութիւնն է . աքարը աւելի կը սիրէ  
մասններուն միջեւ հաստատուիլ բունն եւ անոյճ քերուըտուք  
մը պատճառելով : Այս քերուըտուքի շնորհիւ մորթին խարը  
հետզհետէ ճամբաներ կը բանայ :

Գոսը մորթային ուրիշ կարգ մը հիւանդութեանց ալ  
պատճառ կ'ըլլայ : Հիւանդանոցներու մէջ ամէն օր մեծ թի-  
ւով նմանօրինակ հիւանդներ պիտի խնամուին եւ հիւանդա-  
պահը պէտք է զիտնայ դարմանման եղանակը , բժիշկին պատ-  
ուէրը փութով գործադրելու համար .

Գարմանը Աքարը սպաննելու մէջ կը կայանայ . ամէնէն  
գործնական դեղը Pommade Helmerichն է , որուն էական  
տարրը ծծուժրը կը կազմէ : Հիւանդին մարմինը օճառով  
(savon noir) (արսպ սապօնը) քան վայրկեան լաւ մը  
մը շփել , յետոյ նոյն օճառի լոգանքին մէջ մնալ ժամ մը  
մարմինը միշտ շփելով որպէս զի վերնամաշկը կակղանայ եւ  
աքարը մորթին մէջ պեղած ակօսներէն դուրս ելլելով դիւ-  
րութեամբ սպաննուի :

Օճառի լոգանքէն վերջ քան վայրկեան յիշեալ սպեղա-  
նիով լաւ մը օծանել մարմինը , մասնաւորաբար ծիծերը ,  
դաստակը , նախաբազուկը , ծննդական գործարանները ուր  
մակաբոյժը աւելի բոյն դրած է : Զգեստները ջեռոցով ամլա-  
ցնելէ վերջ հազնիլ առանց լաւ մը չորցուելու : Այս միջոցաւ  
ահա գոտի ենթակայ հիւանդ մը միայն ժամ մը քառասուն  
վայրկեանէն կարելի է բուժել :

### ԱԶՔԻ ԳՈՒՆԱԻՈՐՈՒՄՆԵՐ

Conjectif .— (գօնժօքիՅ) .— Մորթի նման այս թաղանթն  
ալ այլ եւ այլ գունաւորումներ կ'ստանայ . դարուկի մէջ կը  
դեղնի . նուազարիւնութեան մէջ՝ կապոյտ ցոլք մը կ'ստա-  
նայ իսկ քօնժօքիվիթի (conjunctivite) աչքի հիւանդութեան  
մէջ կը կարմրի . թէ ցրտառութիւնը եւ թէ աչքի մէջ մտած

օտար մարմիններ կրնան այս հիւանդութիւնը յառաջ բերել :  
Իբր դարման՝ 5 0/0 eau boriquéeով լուսլ աչքը :

Blépharite. — Կոպարորքոքում. — Այս կոպերու բորքոքումն է. յառաջ կուգայ գրգռիչ փոշիներու եւ կաղային շամանթաղներու (Emanation) ազդեցութենէն : Թարթիչներու արմատը կպչուն կեղեւ մը կը կազմուի. յամառ հիւանդութիւն մ'է. զայն բուժելու համար հարկ կ'ըլլայ թարթիչները փետակով sulfate de cuivreով կամ nitrate d'argentով աղրել այդ մասը :

Արբանդ (Orgelet). — Թարթիչներու արմատին վրայ արիւնափշտիկներ (orgelet) յառաջ կ'ուգայ. զեանախնձորի աղիւրի տաժ դնել, յետոյ լուսլ (eau boriquée) ով : Մորթային հիւանդութեանց վրայ այսչափը բուժ համարելով կ'անցնիմ :

### ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ (Appareil digestif)

Շրքունգներ. — Առողջ վիճակի մէջ շրթունքները վարդագոյն են. ջրարիւնութեան մէջ՝ ձերմակ, իսկ սրտի հիւանդութեան ենթականերուն՝ մանիշակագոյն : Ժանտառենցի մէջ շրթունքները սեւ ձեփով մը կը ծածկուին : Չերմութիւնը սաստիկ եղած հիւանդութեանց մէջ երբեմն շրթունքին վրայ գնախիներ herpèsè կ'երեւին : Թոքատապի (pneumonie սարլիւան) ի ընթացքին երեցող շրթնային վերքերը հիւանդութեան բուժման բարեղէպ նշաններն են :

Լեզու. — Լեզուն կարգ մը ախտանշեր կը ներկայացնէ, զայս հիւանդապահը պարտի գիտնալ ու սորվիլ. բնական առողջ վիճակի մէջ լեզուն՝ վարդագոյն է. կարմրախտի մէջ կարմիր, իսկ անդոյն ջրարիւններու քով :

Առողջի մը լեզուն խոնաւ է, իսկ ջերմութիւն ունեցող լեզուն առուել կամ նուազ խտութեամբ կը չորնայ :

Ժանտառենցի մէջ շատ անգամ խիստ չոր և խորովածի նման է : Մարտդական հիւանդութեանց մէջ լեզուն լորձնաթաղանթով մը կը ծածկուի, լեզուի երկու զլխաւոր հիւանդութիւններ կան :

Aphte.— Լեզուին ծայրը և շուրջը փոքրիկ ջրափամփշափկներ յառաջ կուզան և մէկ քանի օր վերջ պայթելով վէրքի կը վերածուին. ենթական սյրում կ'զգայ, շունչը գարշահոտ է իր հիւանդութիւնը կը տեսէ 7-8 օր:

Դարման.— Լուծողականով մը մաքրել մարսողական խողովակը և վէրքերը algun օվ (շապ) սյրել:

Muguet.— Միւկէ անուամբ բոյսին ծագկին կը նմանին այս հիւանդութեան ախտանիշերը, ուրկէ արդէն ստացած է այդ յորջորջումը. լեզուն և բերանը մածնացած կաթի թանձրութիւնը և ձերմակութիւնը կ'ստանայ: Միւկէն ընդհանրապէս ստամոքսի և աղեաց հիւանդութեանց արդիւնք է. խիստ փոխանցիկ է, չափահասներէ աւելի փոքրերը ենթական են այս հիւանդութեան:

Դարման.— Թեթիւ լուծողական մը՝ Sirop de manne composé տալ. տանին մէկ (borate glyceriné) քսել լեզուին վրայ: Չափահասներու համար կը յանձնարարուի վիշի ջրով բերանը ցօղուել և chlorate de potasseի շաքարներ օրական 5-6 հաս բերնին մէջ հալեցնել:

Կոկորդ.— Կոկորդի ամէնէն յաճախագէպ հիւանդութիւնները երկուք են.— angine simple (անժին սէմբլը), և angine dyphtérique (անժին աիֆթէրիք.— քուչ պօզան):

Angine simple.— Պարզ ցրտաուսթեան մը հետեւանք կ'ըլլայ. իր ախտանշերն են նախ՝ ջերմութիւն, ընկճողութիւն, ստամոքսի խանգարում. ենթական կոկորդին մէջ չորութիւն մը կ'զգայ, մէկ քանի օր յետոյ յուզաթաղանթը կը բորբոքի և լորձնային խաւով մը կը ծածկուի: Հիւանդութիւնը 5-6 օրուան մէջ իր ընթացքը լրացնելով հիւանդը կ'ստողանայ:

Դարման.— Լուծողական մը տալ. հականեխական և կակղեցուցիչ կոկորդալուացք մը (կաւկաուս) կատարել ինչպէս eau boriquéeով:

Angine diphtérique.— Այս կոկորդի կեղծմաշկն է. հիւանդութեան սկիզբը զրեթէ աննշմարելի է. քիչ մը ջերմու-

թիւն և քիչ մը կոկորդի ցաւ հազիւ կ'զգայ ենթական կլամման պոսնուն նեղութիւն մը կ'զգայ, հիւանդը հետզհետէ կը տխրի, կը տկարանայ և ախորժակը կը գոգուի: Առաջին քննութեամբ կոկորդը կարմիր է բայց կ'սկսի շուտով ճերմակ խաւով մը ծածկուիլ որը թաղանթային ծալքեր կ'ընկալայ: անա այս թաղանթները կեղծմաշկ (fausses membranes) կը կոչուին: Հիւանդին նշտիկները կը բորբոքին և կ'ուռին. խիստ փոխանցիկ հիւանդութիւն մըն է և մեծ զոռութիւն ի գործ պէտք է դնել:

Սենեակին մէջ acide phéniqueի և կամ subliméի լուծաջուր սրսկել հականեխելու համար: Հիւանդին հազով արտադրուած ճերմակ մաշկերը, որոնք միքրոպի բոյներ են, ժողուել և 2% subliméի լուծաջրին մէջ դնել. ձեռքերը ելն. միշտ հականեխել: Անմիջապէս բժիշկ կանչել որպէսզի (serum artidiphérique) հակակեղծմաշկային շիճուկ ներարկէ: Վասնզի այս ներարկման յապաղումը սպասուած արդիւնքը չի տար:

### Ս Ս Ա Մ Ո Ւ Յ Ս

Ստամոքսը կարգ մը խանգարումներու ենթակայ է:

Արտխառնուում (nausée).— Արտխառնուումը փսխելու պարզ ընձանք մ'է, առանց իրական արդիւնքի:

Régorgitation.— Ստամոքսին մէջ գտնուած հաստատուն հեղուկ կամ կազային սնունդներուն ուժպ ուժպ, կծկմունով վերադառնալ բերան դայու վիճակն է:

Փսխում (vomissement).— Ստամոքսի մէջ հաւաքուած սնունդներուն ակամայ ճիգով մը դուրս արտաքսումն է:

Բժիշկին համար կարեւոր է գիտնալ թէ փսխումը զիւրութեամբ թէ դժուարութեամբ տեղի ունեցած է. անհրաժեշտ է գիտնալ նաև արտաքսուած նիւթերը, այս ամէնը լաւ մը զիտելով հիւանդապահը բժիշկին պիտի տեղեկագրէ:

Արտաքսումները կըլլան սննդական ինչ որ յաճախադէպ է embarras gastrique (միտէ հումմա) և կապուտ հազ (coqueluche)ի մէջ:

Մաղձային արտաքսումները լեարգի կամ ստամոքսի հիւ-  
ւանդութեան նշան են : Hernie étranglé (դաղբ)ի մէջ փըս-  
խումը կղկղանքային կ'ըլլայ :

Բացի այս նիւթերէն արիւն ևս կը փոխուի . կարեւոր է  
ստիպան արեան փոխումները զանազանել իրարմէ :

Ստամոքսէն եկած արիւնը սուրճի մրուրի (թէլֆ!) դոյ-  
նը ունի և բնաւ փրփուր չի կրեր : Այս կը պատահի ստա-  
մոքսային խլիրդի, վէրքի ինչպէս նաև cihrose de foie կոչ-  
ուած լիտրդի ծանր հիւանդութեան մէջ :

Թոքերէն եկած արիւնը կարմիր և վրփրալից է :

Արիւնափոխման երկու պարագային ալ հիւանդը անկող-  
նին մէջ կռնակի վրայ պառկեցնել, դոււիսը առտոց բարձի .  
քերնէն որեւէ ուտելիք չտալ միայն կրնայ քիչ մը սառ ծծել  
և սուրճի դգալով սառի ջուր խմել բերանը խոնաւ պահելու  
համար :

Մննդական գրեխով միայն պէտք է սնուցանել :

Փսխումներու պատճառը .— Փսխումները կարգ մը հի-  
ւանդութիւններէ յառաջ կրնան գալ . այսպէս 1<sup>o</sup> կովորյի և  
նշտիկներու բորբոխումէն (amygdalite), 2<sup>o</sup> ուղղակի ստամոք-  
սային խանգարումէ ինչ . անմարտողութեան, dyspépsie, em-  
barras gastrique եւն :

3<sup>o</sup> Մարտողական գործարանի ստամոքսէն դատ ուրիշ  
մասի մը խանգարումէն, ինչպէս ալիւտայ խցումն (obstruction  
de l'intestin) աղետապի, (appendicite) մէջ :

4<sup>o</sup> Ջգային դրութեան խանգարումէն, ինչպէս խելապա-  
տակարորրքումի (méningite) ուղեղային ուռի (tumeur céré-  
bral) մէջ :

5<sup>o</sup> Զանազան գործարաններուն խանգարման հետեւանօք  
ինչպէս երիկամունքային ցաւի, լիարեային խիթերու, միզա-  
թունաւորում (urémie) և յղութեան մէջ :

Փսխումը եթէ ճաշերէ անմիջապէս վերջ և ցաւով տեղի  
կ'ունենայ, ստամոքսային վէրքի (ulcère d'estomac) կամ  
ստամոքսի բորբոքման (gastrite aigu) նշան է : Իսկ եթէ ճա-



չէ ժամ մը վերջ տեղի կ'ունենայ խլիրդի, անմարտողութեան (dyspepsie) նշան է:

Առաւօտեան փսխումները ալքոյամոյութեան նշաններ են. նուազարիւնները ևս երբեմն առաւօտեան փսխումներ կ'ունենան:

Ստամոքսային ընդլայնման (dilatation de l'astomac) մէջ 3-4 օրը անգամ մը փսխումներ յառաջ կուգան: Փսխունքը եթէ կղկղանքային գարշահոտորթիւն ունի, աղեաց խցման կամ սոսկալի պնդութեան մը նշան է:

Աղիւցներ. — Աղիքի ամենէն յաճախադէպ հիւանդութիւնը պնդութիւնը (constipation)ն է. այս կղկղանքին աղիքներէն դժուարաւ արտաքսուելն է. կարեւոր է զիտել հիւանդին կղկղանքին քանակը, անոր յաճախադիտութիւնը, գոյնն և պարունակած նիւթերը:

Պնդութեան մէջ կղկղանքը կարծր իսկ փորհարութեան մէջ հեղուկ, կանանչ է: Հնտախտի (choléra) մէջ՝ բրնձաձեւ, կպչուն, ճերմակ հատիկներով կ'ըլլայ:

Պնդութեան պատճառները բազմաթիւ են, կարելի է թուել գլխաւորները միայն. նստակեաց կեանք, չոր սնունդ, մսակերութիւն. երբեմն պնդութիւնը գուտ մեքենական պատճառի արդիւնք է. այսպէս կնոջ մէջ արգանդի ետելի վրայ դառնալը, հոն յառաջ եկած ուռեցքները կը ճնշեն աղիքները և պնդութիւն կը պատճառեն:

Տենդային սուր հիւանդութեանց, ինչ. հարսանիթի, օձախտի մէջ պնդութիւն յառաջ կուգայ:

Պնդութենէ ազատելու հումար կանոնաւոր բէժիմի մը պէտք է հետեւիլ. բանջարեղէն, պտուղ ուտել և բացօդայ պտոյաներ կատարել, նախաճաշէն առաջ առաւօտուն գաւաթ մը պաղ ջուր խմել:

Երբ սակայն պնդութիւնը աղեաց դնդերային հիւանդութեան մը արդիւնք է անհրաժեշտ է բժիշկին միջամտութիւնը:

Պնդութեան մէջ զրեխներ ընել 300-500 ջրով և իբրև մաքրողական աւելցնել (sulfate de magnésie) (մակնէզիա),

sulfate de soude (ինկիլիզ թուղի) կամ Huile de Ricin (հինսեաղը) :

Փորհարութիւն (diarrhée) — փորհարութիւնը բաց ի ցըր-տառութեանէն կարգ մը հիւանդութեանց արդիւնք եւս կրնայ ըլլալ . ինչպէս թոքախաի (վէրէմ, Tuberculose) անմարտ-դութեան, գրգռիչ սնունդներէ և անմաքուր ջրերէ :

Դարմանը պատճառին համեմատ կը տարբերի . եթէ փոր-հարութիւնը գրգռիչ նիւթերու ազդեցութեան արդիւնք է, մաքրողականով մը վսնել զանոնք և մաքրել աղիքները, երբ աղիքի յուղաթաղանթի (muqueuse) բորբոքումէ յառաջ եկած է, հիւանդին լուծողական մը տալով հանդատացնել անկողնոյն մէջ : Հեղուկ, քիչ չափով նիւթեր տալ . կաթ, մսի ջուր, արարոտ եւն . : Փորհարութեան մէջ տալ craie pré-  
parée.

ժանտատենդի մէջ երբ փորհարութիւնը 4-5 անգամը շանցնիր մասնաւոր պնդացնող դեղեր պէտք չէ տալ :

Աղետապ (appendicite) .— Աղետապը կուր աղիին բոր-բոքումն է . որովայնային խիստ ցաւով մը կ'սկսի և ցաւը պորտէն վար դէպ ի աջ կողմը կը տարածուի . ջերմութեան աստիճանը կը բարձրանայ և ենթական սիրտ խառնուուք և փսխում կ'ունենայ, հիւանդին որովայնը ձգտուած է : Իբր անմիջական դարման հիւանդը անկողնին մէջ կոնակի վրայ պառկեցնելով անշարժեցնել, ցաւած մասին վրայ սառով լեցուած սառապարկ մը դնել միշտ սառապարկին և մորթին միջեւ ֆլանէլը չի մոռնալով :

Լուծողական որեւէ դեղ չտալ, կաթ միայն տալ ու բժիշկը փութով կանչելով անոր հրամաններուն համաձայն խնամել զայն :

#### Աղեաց խցում. (obstruction de l'intestin)

Աղեաց խցումը սուր կամ քրօնիկ կրնայ ըլլալ . ենթական պորտին շուրջ խիստ ցաւեր կ'ըզգայ . փսխումներ կ'ունենայ նախ կ'արտադրէ ստամոքսի պարունակութիւնը, յետոյ մաղձ և յետոյ կղկղանք :

Հիւանդը ինքնամոռացման մէջ կ'իյնայ, բազկազարկը տկար է, լեզուն չոր, քիչ կը միզէ և ծարաւէ կը նեղուի: Փուլթով բժիշկին իմացնել զործողութեան կատարման մասին զանցառութիւն մը ըրած չլլալու համար, որովհետև հիւանդին կեանքը այս պարագային վտանգի տակ է:

Կղկղանքի գոյնը — կղկղանքը դալուկի (սարըլըզ) մէջ ճերմակ, ժանտատենդի՝ դեղին և փոքրերու փորճարութեան մէջ կանաչ է: Կղկղանքը կարգ մը ղեղերու է. երկաթի, պիղմուլթի գործածութեան ընթացքին սեւ կ'ըլլայ:

Hémoroïdeի (մայասըլ) մէջ կղկղանքը հոսած արիւնէն կը կարմրի. աղայոց արիւնին մէջ երբ բօլիբ կոչուած հիւանդութիւնը գտնուի կղկղանքը կտրմիր գոյն մը կ'ստանայ:

Կղկղանքի մէջ կը գտնուին երբեմն, անզգուշութեամբ կլանուած կուտեր, օտար մարմիններ, մաղձային քարեր, զանազան մակարոյծներ եւն.:

### Խ Ի Թ Ե Ր (Coliques)

Խիթերը երեք տեսակ են՝ ալեաց, լիարդի, երիկամուկի.

Աղիքի ցաւերը, պնդութեան կամ փորճարութեան պատճառաւ կրնան ըլլալ, այս վերջին պարագային տաք ըմպելիներ տալ, որովայնին վրայ քեքեքօհումը տած դնել վրան 30-40 կաթիլ լավտանում կաթեցնելով:

Երբ աղիքային ցաւի մէջ խոչորափորութիւն (méteorisme) կայ, աղեաց խցման նշան է, տաք լոգանք մը ընել միեւնոյն ատեն փուլթով բժիշկին իմացնել:

Երբ խիթի ատեն փորը կակուղ է. կապարային թունաւորման նշան է, տաք լոգանք և լուծողական տալ:

Լիարդի խիթ. — Լիարդին մէջ կազմուած քարերը, լիարդային խողովակէն անցած պահուն խիստ ցաւեր կը պատճառեն. աջ կողմէն կ'սկսին և մինչեւ աջ ուսը կը տարածուի, քարը երբ աղիքին մէջ իյնայ ցաւը կը դադրի:

Տաք ջրի լաթեր դնել ցաւած տեղը, ինչպէս նաեւ նախորդ պարագային նման տած և լավտանում 30-40 կաթիլ: Երիկամունքային ցաւեր. — Երիկամունքին մէջ աւազ

կամ քարեր յառաջ կուզան որոնք միզախողովակէն (uretère) անցած պահուն սուր ցաւեր կը պատճառեն, որոնք մինչեւ ծննդամիզական գործարանները կը տարածուին: Տաք ջրի չորսնք ընել և ցաւած մասին վրայ տաք լաթերգնել:

### Ո Ր Դ Ե Ր

Աղիքները կարգ մը մակարոյձ կենդանիներ կը պարունակեն. ամէնէն յաճախ կը գտնուի երիզորդը (tenia), մէկ ծայրը խիստ բարակ և միւս ծայրը լայն երիզաւոր որդ մըն է:

Նրբաղիին մէջ բոյն կը դնէ և աղիքային յուզաթաղանթի վրայ ուժգնորէն կը հաստատուի իր գլխի կողմէն որ հաղիւզնդասեղի գլխու մը մեծութիւն ունի, երիզորդին վարի մասերը անջատուելով կղկղանքին հետ դուրս կ'արտաքսուին:

Ենթական, որովայնի ցաւեր, ձգտում, բնական պէտքի գոհացման անկանոնութիւն, խիստ ախորժակ, քթի քերոււղտուք և գլխու ցաւ կ'ուեննայ:

Ascaride lombric.— 16-20 մնդ. երկայնութեամբ կարմրագոյն որդեր են, որոնք դարձեալ նրբաղիին մէջ կը գտնուին: Երբեմն սակայն միչեւ ստամոքս ելլելով փսխմամբ կ'արտաքսուին, և կամ ինքնաբերաբար սրբանէն կ'իջնան: Աղիքներուն մէջ մինչեւ քառասուն-յիսուն հատ կ'ըլլայ որդերու թիւը: Ախտանշներն են՝ սրտի խառնուուք, անկանոն ախորժակ, քթի քերոււղտուք, շունչի հոտ. փոքրերու քով երբեմն ջղապրկումներ յառաջ կուզան:

Oxure.— ձերմակ, փոքր որդեր են, որոնք յետնաղիին և սրբանին մէջ կը գտնուին. այս հիւանդութիւնը փոքրերու մէջ աւելի յաճախագէտ է: Սրբանային մասին մէջ անասնելի քերոււղտուքներ յառաջ կուզան:

Որդային այս հիւանդութիւնները դարմանելու համար ենթակային լուծողական մը տալ և բժիշկին յանձնարարութեամբ յետոյ Santoine կոչուած դեղը առնել:

### ՇՆՉԱՌԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹ (Appareil respiratoire)

Քրափող (narine).— Քթափողէն կարգ մը հեղանիւթ հոսումներ յառաջ կուզան. ուղեղային հարբուխի մէջ հո-

սուժը ջրային է. ուրիշ հիւանդութեանց մէջ այդ հոսուժը կրնայ ըլլալ դարչահոտ և թարախալից :

Քթէն արիւն եւս կը հոսի. այս քթային արիւնահոսութեան մասին պիտի ծանրանամ ընդհանուր արիւնահոսութեանց վրայ խօսած ատենս :

Խոչափող (larynx) եւ շնչափող (trachée).— Չայնը կարգ մը խանգարումներու ենթակայ է :

Չայնախեղում (enrouement).— Չայնը կը կորսնցնէ իր հնչականութիւնը և խեղդուած կ'ըլլայ :

Չայնամարում (aphasie).— Ենթական բնաւ չի կրնար խօսիլ, ձայնը քոյրորդին մարած է :

Հազ (toux).— Հազը շնչառական գործարանի խանգարման արդիւնք է. կարեւոր է զանազանել հազի տեսակները :

Չոր հազ.— Չոր հազին բնաւ հեղանիւթ արտաքսում չընկերանար. իսկ խոնաւ հազին թուքը կամ խուխը կ'ընկերանայ : Հազը կարգ մը ինքնայատուկ եղանակներ կ'ունենայ. հարսանիթի մէջ խօսպոտ է, խոչափողային կեղծմաշկի (croupé) մէջ՝ ձայնը մարած կ'ըլլայ, և այսպէս ուրիշ կարգ մը փոփոխութիւններ կ'ստանայ :

Խոչափողային կեղծմաշկ (croupé).— Խիստ փոխանցիկ հիւանդութիւն մըն է. շատ անգամ համաճարակի ձև կ'ստանայ. կ'սկսի նախ ձայնի և շնչառութեան խանգարմամբ, հիւանդը կարծ կարծ և միշտ կրկնուող հազ մը (quintéux) կ'ունենայ : Փոքրերը աւելի ենթակայ են այս հիւանդութեան. հականեխական ամէն միջոց կիրարկել առանձնացնելով փոքրիկը և փութով բժշկին լուր տալ գէպքը :

Կեղծմաշկ.— Երեք ամսուան փոքրերէն մինչեւ երեք տարեկաններու մէջ յաճախագէպ է իբր գէշ սնանման և յոռի ինամքի արդիւնք :

Բուն կեղծմաշկէն կը զանազանուի իր ախտանիշերու սաստկութեան աստիճանով, փոքրիկը որ քաջաուղջ էր և գիշերը հանդարտօրէն կը քնանար, յանկարծ իր խողաղքունէն շնչահեղձութեան նոպայով կ'արթննայ. կ'սկսի աղաղակել և հեւ ի հեւ շնչել, խեղդուկ հազ մը կը նեղէ զինքը :

Այս նոպային բազկազարկը աւելցած է և մարմինը քրտինքով ծածկուած: Մէկ երկու ժամուան տեւողութեանէ վերջ կը գաղբի այս վիճակը, ազան կը հանդարտի և վերատին կը քնանայ, առաւօտուն փոքրիկը բոլորովին քաջառողջ է, հետեւեալ օրը միեւնոյն նոպան կրնայ կրկնուիլ:

Կ Ո Ի Ր Ծ Ք (Poitrine)

Շնչառական գործարանները, կպչուն նիւթ մը կ'արտադրեն որ թուք կամ խուխ (crachat) կը կոչուի:

Այս թուքերը կ'ըլլան երբեմն փրփրային, որոնք օդի պղպղակներ կը պարունակեն. խուխը թարախոտ եւս կրնայ ըլլալ, ինչպէս նաեւ արիւնային:

Կողի ցաւ (point de côté).— Կուրծքին մէկ մասին մէջ մտած սուր ցաւ մըն է որ երբեմն շնչառութեամբ և ճնշումով աւելի կը սաստկանայ. այս ցաւը զլիսաւորաբար երեք մասերու մէջ կը հաստատուին.

1. Ենթաստինքային (sous-mamelle).— Ստինքի ներքեւ հաստատուած ցաւն է որ յաճախ թոքատապի (սաթլիճան) նշան է:

2. Ենթաանուքային (sous-axillaire).— Անութին տակի այս ցաւը թոքամզատապի (pleureusie) մէջ յառաջ կրնայ գալ:

3. Միջնակողային ջղացաւուս (Nevralgie inter-costaux).— Կարգ մը ջղային հիւանդութեանց մէջ կողոսկրերուն միջեւ յառաջ եկած ջղային ցաւեր են:

Դժուարաշնչութիւն (dyspnée).— Դժուարաշնչութիւնը օդին շնչառական գործարանին մէջ ազատ մուտքի արգելքն է. ենթական դժուարաւ կրնայ շնչել. այս շնչառական գործարանի կարգ մը ծանր հիւանդութեանց նշան է: Ենթաւային պէտք է յանձնարարել որ լուռ մնայ և իրեն յարմար դիրք մը ստանայ, որպէս զի դիւրաւ կարենայ շնչել: Այս պարագային թթուածնի ներշնչումներ եւս կը կատարուին: Ոտքերուն քով, տաք ջրով լի շիշեր դնել զանոնք լաթերով փաթթելէ վերջ, զգուշացէք որ անուշադրութեամբ չայրէք խեղճ հիւանդին ոտքերը և անգամ մը եւս ի զուր տեղ զայն տառապեցնէք:

Շնչահեղձութիւն (Asphyxie).— Երկար ժամանակ շնչաուժեկան դադարումն է. մտքը կը կապուանայ արեան համախոնման հետեւանօք, մարմինը կը պաղի և ընդհանուր անդդադանում մը յառաջ կուգայ: Շնչանհեղձութեան գլխաւոր պատճառներն են՝ 1. քրուածնոյ նուազութիւն, 2. ձնշում, 3. Ջրահեղձութիւն, 4. Խեղդում, 5. Կախում, 6. Օտար մարմնոյ մուտք շնչաուժեկան գործարանին մէջ:

Շնչանհեղձութեան պարագային ձեր առաջին ընկիւք գործը պիտի ըլլայ վերցնել այն պատճառը որ արգելք եղած էր ազատ շնչաուժեկան. ենթական փութով օդաւուն տեղ մը փոխադրել. հագուստները բուլցնել կամ աւելի լաւ ևս հանել զանոնք. լեզուն կանոնաւոր և դանդաղ կերպով դուրս քաշել: Երբ բերնին մէջ ազտաուժիւններ կան՝ փութով մաքրել զանոնք: Ամբողջ մարմինը ուժգին կերպով շփել: Երբ այս բոլոր միջոցները տպարդիւն մնան արուեստական շնչաուժեկան զիմել, այս գործողութիւնը ընդհանրապէս թէև բժիշկին կողմէ կը գործադրուի, բայց հիւանդապահը զայն պէտք է գիտնայ բժիշկի յապաղման կամ անոր բացակայութեան պարագային անձամբ կարենալ կիրարկելու համար:

1. Բերնով շունչ փչել բերան առ բերան, միւս կողմէն ստան օգնական մը փոխն ի փոխն կուրծքին և որովայնին վրայ ճընշումներ պէտք է կատարէ:

2. Բաղուկները փոխն ի փոխ որովայնին և մէջքին վրայ տանիլ բերել:

3. Շնչանհեղձին ետեւը կենալ, բաղուկները բռնել և զանոնք գլխուն ետեւ բերել ու երեք չորս երկվայրկեան կենալ, յետոյ վար իջեցնել և այսպէս շարունակաբար (այս Աէլլէսթոի մէթօսն է):

4. Դանդաղ եւ կանոնաւոր կերպով լեզուն քաշել: Այս ամենէն լաւ և ապահով միջոցն է. շնչանհեղձին լեզուն մաքուր լաթով մը կամ գործիքով (pince) մը բռնել ծայրէն քաշել և թողուլ կամոց և կանոնաւոր կերպով:

5. Թրուածիմի ներշնչում.— Ամէնէն լաւ դարմանն է քայց դժբախտաբար ամէն պարագայի կարելի չըլլար զայն հայթայթել :

Յնցղատապ (Bronchite).— Խոշոր կամ միջին ցնցուղներու բորբոքումն է . հրը ցնցուղին վերջին ճիւղաւորութիւններն ալ բորբոքին , այն ասան մազային ցնցղատապ (Bronchite capillaire) կը կոչուի : Փոքր սղայոց և ձերերու մէջ յաճախադէպ և խիստ վտանգաւոր հիւանդութիւն մըն է : Թեթեւ ցնցղատապի մէջ , զոր ժողովրդական կերպով կուրծքի հարբուխ կը կոչենք , հիւանդը հազիւ ջերմութիւն կ'ունենայ . սկիզբը հազը չոր է , վերջը խուխը կ'ընկերանայ : Ութէն մինչև տասը օր կը բուժուի :

Սաստիկ ցնցղատապի մէջ սարսուռ , մախլ , ընկճողութիւն և ջերմութիւն յառաջ կուգայ . հիւանդը գլխու ցուկ'ունենայ , օխորժակը կը նուազի . հազը նախ չոր է , յետոյ խիստ . 15-20 օրէն կ'առողջանայ հիւանդը :

Մազային ցնցղատապ (Bronchite capillaire).— Ընցղատապի ամէնէն ծանր վիճակն է . ենթական դժուարաշնչութիւն կ'ունենայ , ջերմութիւնը 39°-40° է . բաղկադրուող սկոր է և շատ անգամ մահացու է այս : Ընդհանուր կերպով ցնցղատապի դարմանումը դրեթէ նայն է . սենեակը սառ և քիչ մըն ալ խոնաւ պահել , կուրծքը բամպակով լաւ մը ծածկել : Ապաքինման մէջ հիւանդը խիստ զգուշ պիտի ըլլայ ցրտառութենէ , որ հիւանդութեան կրկնումին պատճառ կրնայ ըլլալ :

Կապուտ հագ (coqueluche).— Կապուտ հազը փոխանցիկ և համաճարակային հիւանդութիւն մըն է . երեք չրջանէ կը բաղկանայ . առաջին շրջանը ցնցղատապի նմանութիւն ունի . երկրորդը ջղաձգական վիճակ մըն է , որուն կապուտ (quin-teux) հազը կ'ընկերանայ . այս շրջանին կ'երեւին բուն օխտանիչերը , հիւանդը կը փսիէ իր բոլոր կելածները . երրորդը ապաքինման շրջանն է :

Թոքատապ (Pneumonie, սաթկիճան).— Թոքատապը թոքերու բորբոքումն է , թոքին վարակուած մասը կը կարծ-



բանայ և չի կատարեր իր պաշտօնը . այս հիւանդութիւնը արանց մէջ աւելի յաճախադէպ է քան կանանց մէջ :

Հիւանդութիւնը զօրաւոր օխտանիչերով կը սկսի . դող , 39<sup>0</sup>-40<sup>0</sup> ջերմութեան բարձրացում , 6-8 օր ջերմութեան աստիճանը անփոփոխ կը մնայ , շնչառութիւնը կ'արագանայ . մէկ վայրկեանի մէջ 40-80 անգամ կը կատարուի , բազկազարկը 100ի կը բարձրանայ թուքը , խուլիը կարմրագոյն և կղմընաբազոյն է :

Երբ հիւանդը դէպ ի ապաքինում հակի ջերմութիւնը կ'իջնայ և իր բնականոն վիճակը կ'ստանայ :

Երբ այս հիւանդութեան ենթակաները սղաքներ և երիտասարդներ են , ընդհանրապէս կրնան աղատիլ , բայց ծերերու , սլքօլամոններու մէջ շատ ծանրակշիռ և վտանգաւոր է :

Քուֆալտ (Phitisie).— Միքրոպային , փոխանցիկ , շատ ծանօթ հիւանդութիւն մըն է , որ մեծ պատերազմներէ աւելի մարդկային զոհեր կը խլէ : Մանրէն 1882ին Գերմանացի մեծանուն գիտուն՝ Քոխը դասու և միքրոպին սլ յիշեալ գիտունին անուամբ ֆոխի մանրէ կը կոչուի : Ընդհանրապէս թեթեւ և մերթ ընդ մերթ կրկնուող ցնցղատապով կը սկսի հիւանդութիւնը :

Թոքախտաւորները շատ անգամ հինցած թոքամզատապ (pleureusie) ունեցողներ են . հիւանդը արիւն կը թփնէ և կը սկսի նիհարնալ , ախորժակը կը բթանայ , ուժը կը կորսընցնէ և մարսողութիւնը դժուարանալով փսխումները յաճախադէպ կ'ըլլան :

Ենթակային թուքը քննուելով ուռականութեան մանրէներ կը գտնուին : Սկզբնական շրջանին երբ լաւ խնամուի հիւանդը՝ կը բուժուի և պետք է որ բուժուի : Թոքախտը երեւակայուածին նման անբուժելի և զարհուրելի հիւանդութիւն մը չէ : Ապրելու վառ անչով և բնութեան բարի աջակցութեամբ ենթական շատ հեշտիւ կը բուժուի այս հիւանդութենէն , բնութեան ազատ գրկին մէջ ապաւինած : Մա-

հուր օդ, արեւ և սևուցնդ . բժշկական դեղերը լրացուցիչ և երկրորդական դարմաններ կը կազմեն . բայց լքուածով և խնամքի թերացումներով հիւանդութիւնը կը շարունակէ իր ընթացքը և հիւանդը օր ըստ օրէ կը հիւճի :

Այսերը կը դունաւորին , կուրծքը աւատ քրտինքով կը ծածկուի մանաւանդ գիշերը՝ քնոյ պահուն .

Յօնքերը և թարթիչները կը շտանան և կը խոչորնան . ջերմութիւնը կը նեղէ զինքը , ձայնը կը խանդարուի , հիւանդը քովի ցաւեր և փորհարութիւն կ'ունենայ :

Միայն իր մաււորական կարողութիւնը մինչև իր վերջին վայրկեանը բնականոն կը մնայ :

Ջերմութեան աստիճանը առաւօտուն բնական է , իսկ իրիկուան 38°-39° կը բարձրանայ . արիւն թքնկլը դրկի է սովորական ախտանիշ մըն է :

Երբ հիւանդը ջերմութիւն չունի թեթեւ մարդանքներ պէտք է կատարէ :

Թոքախտի դարմանումին մէջ լաւատես պէտք է ըլլալ , շատ սխալ է ժողովուրդին այն ըմբռնումը , որով թոքախտը անբուժելիին հոմանիշ կը նկատէ , կատարելապէս բուժելի է ան առաջին և երկրորդ շրջաններուն և հարիւրին 7-8 երրորդ շրջանին մէջ :

Թոքախտաւ (Pleureusie) .— Թոքային մաշկին բորբոքումն է . այս բորբոքումը կրնայ ըլլալ չոր , հեղուկային կամ թարախային հաւաքումով . ընդհանրապէս թոքատապի կամ թոքախտի կ'ընկերանայ . կողի ցաւով , գողղզալով կը սկսի հիւանդութիւնը և հետզհետէ ջերմութեան աստիճանը կը սկսի բարձրանալ , տղայոց մէջ հաւաքուած հեղուկը շարաւ է . գոր պարզ գործողութեամբ կը պարպուի :

Անկողին , տաք սննեակի մէջ հանգիստ , միայն կաթ առնել , ցաւերը դադրեցնելու համար չոր եղջիւրներ (ventouse, պոլյուզ) քաշել , լուծողականներ և քրտնեցուցիչ գեղեր տալ :

ԱԻՇԱՅԻՆ ԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Օձախտ (Erysipèle, *երլանճըզ*).— Մանրէական հիւանդութիւն մը և աւշորորոքում մըն է. խիստ փոխանցիկ և համաճարակային. հիւանդապահներ և հիւանդապահուհիներ, մաքրութեան և հակոնեխման մասին մեծ զգուշութիւն պէտք է գործ դնէք: Հիւանդին հետ շփման մէջ գանուելէ անմիջապէս յետոյ ձեռքերնիդ օձառով լուացէք և subliméի լուծաջուրին մէջ մխրճեցէք:

Երակատապ (Phlébite).— Բաւական ծանր հիւանդութիւն մ'է այս երակային բորբոքումը: Վարի անդամներուն վրայ աւելի յաճախաբէպ է, սուր ցուերով և ուսեցքով: Այս հիւանդութիւնը ուրիշ կարգ մը հիւանդութեանց հետեւանօք ևս երեւան կուգայ, ինչպէս ժանտաստեղի, ծննդաբերութեան պահուն ևս եթէ հոգ չի ատրուի մաքրութեան կրնայ այս երակատապը յուռջ գալ: Բորբոքած մասը բացարձակ հանգառութեան մէջ պահել և վրան տաք, թըշտծ լաթեր (compresse) դնել. քառասուն օր պէտք է այսպէս անշարժ վիճակի մէջ դարմանուի, և ընդհանրապէս կարելի կ'ըլլայ բուժել. բայց անզգոյշ շարժում մ'իսկ մ.ճ կրնայ պատճառել:

Բազկազարկ (Pouls).— Բժշկութեան մէջ, սրաին բաբխման արագութիւնը հասկնալու համար հիւանդին բազկերու կը քննուի, առողջ մարդուն բազկերակը մէկ վայրկեանի մէջ 60-70 անգամ կը զարնէ, տղայոց մէջ 80-90: Զարկը կրք 90-100-150 կը բարձրանայ արագացած (accélééré) կը նկատուի ինչ որ տենդային ծանր հիւանդութեանց մէջ կը պատահի և գէշ նշան մըն է: Երբ մինչև 60 բարբխման կ'իջնէ դանդաղացած (relenti) կ'ըսուի:

Զարկը անկանոն կը նկատուի երբ բարբխման և դադարի տեսողութիւնը միշտ կը փոխուի և կայուն ու կանոնաւոր չէ, բարբխման մէջ երբ զարկը կանգ կ'առնէ այն ատեն ընդմիջւող զարկ (pouls intermitent) կ'անուանուի:

Երբեմն բազկազարկը հազիւ կ'զգացուի երբ արդէն հիւանդին վիճակը յուսահատական է:

Սիրտ (Cœur) .— Սիրտը կարգ մը հիւանդութեանց ենթակայ է . որոնց ախտանիշները բազմաթիւ են . տրոփիւնը (palpitation) սրտի զարկին արագացումն է որ ցոյց կուտայ թէ սրտին բնականոն գործունէութիւնը խանգարուած է և կծկումի ու ժգնութիւնը և սաստկութիւնը աւելցած :

Նուաղում (Syncope) .— Նուաղումը յանկարծական կերպով սրտի բարախման դադարումն է . երբ նուաղ խտութեամբ կ'արտայայտուի այս վիճակը՝ մարելիք (défaillance) կը կոչուի : Կոնակի վրայ զլուխը քիչ մը վար ծռած պառկեցնել և ձաղկանք կատարել :

#### ՄԻՋԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԱՆ (Apparail urinaire)

Երկկամուռնքը միզային գործարանն է . արեան մէջ գանձուող մզիտը (urée) և ուրիշ թոյներ կ'առնէ և զանոնք մեզի ձեւին ատկ կը զրկէ միզաման ուրիշ ծննդամիզական խողովակով դուրս կ'արտաքսուի :

Միզարգելում .— (Retenion d'urine) Միզարգելումը քիչ քանակաւ միզելը կամ միզելու բոլորովին անկարելիութիւնն է :

Միզարձակումը (Incontinance d'urine) ենթակային առանց գիտակցութեան միզելն է . կը պատահի ծերերու , ծանր հիւանդներու և բոլորովին քաջաուղջ փոքրերու ալ :

Դժուարամիզութիւն (Dysurie) .— Ենթական միզած պահուն ցաւ և այրում կ'զգայ . միզամանի քարի հիւանդութեան , ջերմամիզութեան (Blenorrhagie պիլ սօլուլիլը) և ուրիշ այս տեսակ հիւանդութեանց մէջ յառաջ կուգայ :

Առողջ մարդ մը , 24 ժամուան մէջ 1200-1500 կուամ կը միզէ : Մէզի քանակութիւնը , քրտնարտադրութեան հետ համեմատական է . երբ քրտինքի արտադրութիւնը աւելնայ , մէզը կը նուազի և փոխադարձաբար :

Երկկամուռնքի կարգ մը հիւանդութեանց մէջ մէզի քանակը կ'աւելնայ . շաքարախտի (Diabete շէքէր էլլէթի) մէջ օրական մինչեւ 6-8 լիտր կ'ըլլայ :

Հիւանդապահէն մէկի յատուութեանց մասին բ'իշկին ստացած տեղեկութիւնները շատ կարեւոր են: 24 ժամուան մէջը պէտք է հաւաքուի և քիմիագէտի մը զրկելով տարրալուծել սալ:

Կարգ մը հիւանդութեանց մեջ յառաջ եկած արիւնահոսմանյ անմիջական դարմանները .

Քրի արիւնահոսութիւն . — Արիւնը կրնայ կաթիլ կաթիլ կամ ուժգնօրէն քթի մէկ ուռնգէն և կամ երկու ուռնգէն միաժամանակ հոսիլ: Արբունքի հասնողներուն մէջ, առանց որ և է հիւանդազին պատճառի կրնայ այս արիւնահոսութիւնը յառաջ գալ . տնդային կարգ մը հիւանդութեանց, ինչպէս ժանտասնդի, հարսանիթի եւն . մէջ յաճախագէտ է: Արիւնահոսութեան թեթև պարագային յանձնարարել ենթակային որ չի խնջէ և ինքնաբերաբար արիւնը կը դադրի հոսելէ:

Երբ արիւնը առատօրէն կը հոսի, պէտք է դուք բժիշկին ժամանուածէն առաջ անմիջական դարմաններ և միջոցներ գործադրէք: Արիւն հոսած ուռնգին հակառակ կողմի ձեռքը վեր բարձրացնել և այսպէս մնալ մէկ քունի վայրկեան: Կլուխը քիչ մը ատեւ ծռել, քթին և ճակտին վրայ սրաջ ջրի մէջ թաթխուած լաթեր կամ սառ դնել, քացախախտան ջրով լուսայ քիթը: Երբ այս միջոցները ապարդիւն մնան, առանին մէկ antipyrineի լուծաջրին մէջ բամպակը թաթխել և քթափողին մէջ դնել: Այս միջոցն ալ երբ բաւարար չըլլայ, վերին և ստորին անդամներուն վրայ (papier de sinapisme հարսալ քեաղըտը) դնել և զօրաւոր սեղմակապով մը ծռնկին և նախարապուկին անմիջապէս վերի մասը ուժգին կերպով սեղմել:

Արիւնահոսութիւնը երբ հակառակ այդ անմիջական խնամքներուն կարելի չըլլայ դադրեցնել, այն ատեն կը մնայ բժիշկին անպայման միջամտութիւնը: Բժիշկը մասնաւոր գործիքով մը (sonde de Bellen) կը խցէ քթի ծակերը և արիւնահոսումը այսպէսով կը ուղղրի:

Արիւնաքիւում. — Թոքերէն եկած արեան, խուխով և թուքով արտաքսումն է, թոքախաի և սրտի հիւանդութեանց մէջ յաճախաղէպ է. իր փրփուրով ստամոքսէն կամ քթէն եկած արիւնէն կը դանաղանուի :

Նմանօրինակ պարագային, հիւանդատղանկ'ը, ձեր սուղին պարտականութիւնն է, վստահեցուցիչ խօսքերով հանդարտեցնել հիւանդը՝ որ այդ վիճակէն մեծ երկիւղ և սուկում կ'զգայ :

Հիւանդը յետոյ անմիջապէս նստեցնել իր անկողնին մէջ, ոտքերը անկողնին կղերքէն վար կախած : Արդիլի ո և է շարժում և կամ խօսակցութիւն մը. հիւանդին յանձնարարել որ որքան կարելի է զսպէ իր հազը ինչ որ արիւնթըքումը աւելի պիտի շատցնէ :

Օգուտըման համար քանազ պատուհանները. կաղնիի մեծութեամբ ստոի կտորներ կլլեցնել և բժիշկին հրամանաւ կուրծքին վրայ սառապարկ մը դնել :

Այս միջոցներով պիտի յաջողիք արիւնաթքումը դադրեցնել կամ դանէ նուաղեցնել զայն :

Երբ հիւանդը մեծ քանակաւ արիւնարտադրում կ'ունենայ խեղդուելու ձեւով, դո՛ւք մինչև քսիշկին ժամանումը չոր շիշեր (Ventouse պուշուղ) քաշեցէք և ի հարկին անութը և աճուկները կապով մը ուժղին կերպով սեղմել :

Արիւնափսխում (Hématémèse). — Արիւնափսխումը հիւանդին ստամոքսէն հոսած արիւնն է որ սուրճի մրուրինման սև հեւք մը կը կրէ. ստամոքսի ծանր հիւանդութեանց և կամ անոր մօտ գանուղ ուրիշ զործարանի մը խանգարման արդիւնք կրնայ ըլլալ :

Աղիքային արիւնահոսութիւն (Enterurgie). — Աղիքային արիւնահոսութիւնը ընդհանրապէս ժանտաստեղի և ուրիշ աղիքային կարգ մը հիւանդութեանց մէջ կը պատահի :

Արիւնամիզում (Hématurie). — Արիւնամիզումը երիկամունքի կամ միզամանի հիւանդութեանց արդիւնք է. հի-

ւանդը երբեմն, նախապէս արիւն կը միզէ. կրնայ ճիշդ հակառակն ալ պատահիլ, նախ մէզ և յետոյ արիւն :

Անհրաժեշտ է որ այս տեղեկութիւնները նօթերով ներկայացնէք բժիշկին :

Արգանդի արիւնահոսում (Metorrhagie). — Այս արիւնահոսութիւնը կանանց միայն յատուկ է և արգանդի հիւանդութեանց մէջ յառաջ կուգայ, այս պարագային ալ պէտք է նախ հանգարտեցնել հիւանդը և յետոյ դարմանման ձեռնարկել :

Հիւանդը կռնակի վրայ պառկեցնել՝ դայն բացարձակ հանգիստի և անշարժութեան մասնելով : Բնական պէտքի գոհացման համար իսկ փոքր շարժում մ'իսկ պէտք չէ ընել : Հիւանդին զլիտեն բարձերը վերցնել և զանոնք մէջքին տակ տեղաւորել, որովայնին վրայ սառապարկ մը դնել, պորաին տակ գանուող «Որովայնային շնչերակ»ը ուժեղ կերպով ճնշել . հակամեխական տաք լուծաջրով մը արգանդի գրեխ ընել . այս գործողութեանց ընթացքին փութով լուր զրկել բժիշկին :

### ԶՂԱՅԻՆ ԳՐՈՒԹԻՒՆ (Système nerveux)

Զղային զրութիւնը, մեզ բնութեան հետ յարաբերութեան դնող գործարանն է. երեք զլխաւոր պաշտօններ կը կատարէ . —

ա). — Ինքնակամ շարժումներ .

բ). — Ընդհանուր և մասնաւոր զգացողական շարժումներ :

գ). — Իմացական վիճակներու արտայայտութիւն : Զղային զրութեան մէջ զգացողական և շարժական կարգ մը խանգարումներ յառաջ կուգան :

Շարժական խանգարումներն են՝ Անդամալուծութիւն (Paralytie), դնդերապրկում (Convulsion), Շարժախանգարում (Ataxie) . Գողգղալ (tremblement) : Անդամալուծութիւնը, շարժումներու կատարման դժուարութիւնը կամ անոնց բոլորովին անկարելիութիւնն է, երբ մարմնոյն կէս

մառը աջը կամ ձախը ենթակայ է այս հիւանդութեան՝  
կիսագոտութիւն (hémiplegie) կը կոչուի :

Դնդերապրկումը , անդամալուծութեան ճիշդ հակառակն  
է . դնդերներու չափազանց պրկումն է :

Իմացողական խանգարումներն են՝

Ջառանցանք (Délire) . — Իմացողական կարողութեան  
խանգարումն է . կ'ըլլայ ժամանակաւոր ինչպէս կարգ մը  
տենդային հիւանդութեանց՝ ժանտաանդի , թոքատապի են . Ի  
մէջ , և երբ մնայուն է այս խանգարումը յիմարութիւն  
(folie) կը կոչուի : Ջառանցանքները կատարի կամ հանդարտ  
կերպով կ'արտայայտուին . ալքոլամոլներու դառանցանքը  
չատ հանդարտ է :

Coma (Բօմա) . — Ինչոյ վիճակ մը , խոր թմրութիւն մ'է ,  
նուազումէն կը տարբերի զարկի գոյութեամբ . ընդհանուր  
շփումներ ընել , ոտքերուն վրայ մանանեխի թուղթ գնել :

Գլխու պտոյտ (vertige) . — Ենթական իր շուրջը դանուող  
առարկաները կը տեսնէ որ կը դառնան , դետին չիչնալու  
համար յենարան մը կը փնտռէ , տեսողութիւնը կը խան-  
գարուի , ականջին մէջ խժում կ'զգայ և սիրտը կը բարտխէ :

Մասնաւորաբար կ'ուզեմ ծանրանալ ջղային կարեւոր և  
խիստ ծանօթ հիւանդութեան մը՝ յիմարութեան վրայ :

Յիմարներ . — Յիմարները հիւանդներ են որոնց իմացա-  
կանութիւնը խանգարուած է առաւել կամ նուազ աստիճա-  
նով , քաղցր և հաճոյակատար վերաբերմունք մը պիտի ու-  
նենաք յիմարներու հանդէպ , միշտ ուշադրութեամբ պիտի  
հսկէք անոնց բոլոր շարժումներուն :

Շատ մը խելագարներ , զաղափարաց հալածանքի (idée  
de persécution) ազդեցութեան տակ ընկճուած ու յուսա-  
հատ մարդասպանութեան կամ անձնասպանութեան փորձե-  
րու կը սարուին : Հիւանդապահը իր աչազուրջ հսկողու-  
թեամբ պիտի կանխէ և արգիլէ նմանօրինակ փորձերը , յի-  
մարներու քով չուան , դանակ , մորակ պէտք չէ թողուլ ,  
իր նոպային մէջ կրնայ ձեր բացակայութենէն օգտուելով



գործադրել իր միտքը չտրչարող սև մտածումը՝ անձնասպանութիւնը, որուն միակ պատասխանատուն գուք կը նկատուիք այն ատեն: Երբ պատահի թէ յիմար մը խուռափել ուժամէն հսկողութենէ կտխած է ինքզինքը. անմիջապէս երբ հասնիք, կտրեցէք շուանները, փութով հանեցէք զգետները, կուրծքին վրան մանանխի թուղթ (հարսալ-քեաղըսը)՝ զրէք, դէմքին, վղին վրայ քացախ քսեցէք ի հարկին արուեստական շնչառութիւնն այ կատարելով: Բժիշկը հասնելով կրնայ աւելի ազդեցիկ միջոցներ ձեռք առնել ենթակային կեանքը փրկելու համար, եթէ արդէն շատ ուշ չէ:

Երբ հատու գործիքով մըն է որ անձնասպանութիւն փորձած է, ձեզ ծանօթ միջոցներով աշխատեցէք մինչեւ բժիշկին ժամանումը արգիլել արիւնհոսութիւնը: Վերին աստիճան փափկանկատ և զթոտ վերաբերում մը պիտի ունենաք այդ դժբախտ արարածներուն հանդէպ, որոնք բախտին դժխեմ քմահաճոյքով կորսնցուցած են իրենց իմացականութիւնը, ինկած են այդ տխուր շէնքին մէջ յանձնուած՝ ձեր և բժիշկին խնամքներուն:

Որքան վսեմ բան է մխիթարել դժբախտ մը, մեղմել ցաւը և սփոփել տառապող մը:

Փորձ հիւանդապահը ուսումնասիրած պէտք է ըլլայ հիւանդին նկարագիրը. ճանչնայ անոր տկար կողմը ի հարկին օգտուելու համար այդ ծանօթութիւններէն:

Շատ անգամ մեղմ և համոզիչ վարմունքներ անօգուտ կ'ըլլան հիւանդին զրգութիւնը զսպել և դժբաղդարար հարկ կ'ըլլայ մասնաւոր խուցերու մէջ առանձնացնել զանոնք և գործադրել բժիշկին յանձնարարութիւնները:

Յիմարաւաններու թիւը, անհրաժեշտ պէտքէն միշտ աւելի պէտք է ըլլայ:

## ՆԵՆԻՉ ՀԻՒՍՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

(Maladies infectueuses)

Կարմրախտը, կեղծմաշկը և ուրիշ այս կարգի հիւանդութիւններ իրենց սերմերով և մանրէներով կը տարածուին, սերմերը այն ատեն կրնան հիւանդութիւններ յառաջ բերել երբ իրենց աճեցման նպաստաւոր պայմաններու մէջ կը գտնուին :

Մանրէները մարդկային մարմնոյն մէջ այլեւայլ անցքերէ կը մտնեն, թոքերու, մարսողական գործարանի և մորթի միջոցաւ :

Հիւանդութիւնը անպատճառ մանրէներու ստացմամբ և կամ անմիջապէս յառաջ չի դար, երբ մանրէն արեան ճեղմակ զնդիկներու հակազդեցութեան յաղթէ, այն ատեն է որ կը սկսի աճիլ մարմնոյն մէջ : Մանրէին մուտքէն մինչեւ արտանիշի երեւումը ենթական կարեւոր անհամապատասխան մը չգգար . այս ժամանակամիջոցը քիսուսի շրջան (Période d'incubation) կը կոչուի : Այս աեւողութիւնը հիւանդութեան համեմատ փոփոխական է . այսպէս կարմրախտի մէջ 1-2 օր . կատաղութեան (գուտուղ . Hydrophobie) մէջ 2-3 ամիս, ծաղիկի (Variole չիչէֆ) մէջ 2-4 օր . հարսանիթի՝ 4-7 օր եւայլն :

Յետոյ այս առաջին շրջանէն վերջ երկրորդ շրջանը կը սկսի հիւանդութեան արտանիշերուն երեւան գալով :

Այս հիւանդութեանց մասին կ'ուզեմ համառօտ ծանօթութիւններ տալ, անհրաժեշտ զգուշութիւնները և խնամքները զիտակցօրէն ի գործ դնելու համար :

Կարմրախտ (Scarlatine գըզըլ) .— Տեղական համաճարակային, փոխանցիկ հիւանդութիւն մըն է, իր առաջին արտանիշերը են՝ դող և ջերմութիւն որ 40-41 աստիճանի կը բարձրանայ, յետոյ զլսուեցաւ, փորհարութիւն, փսխում են . : Նշդիկներու վրայ խիստ կարմրութիւն մը յառաջ կուզայ . այս արտանիշերուն կը յաջորդէ՝ ժայթքումներ

որոնք փոքր և խոշոր տարածուն կարմրութիւններ են : Այս կարմրութիւնները , նախ մարմնոյն զանազան մասերէն կը սկսին և յետոյ դեմքին , մինչդեռ հարսանիթի մէջ նախ զէմքէն է որ կը սկսի :

Այս կարմիր ցայտումները 7-9 օր վերջ կը թեփոտին , թեփոտումը վիզէն սկսելով կը տարածուի միւս մասերը . այս շրջանին է որ հիւանդութիւնը ամէնէն շատ փոխանցիկ է , մինչև քանի մը չաքաթ :

Հարսանիք (քըզամուք , rougeole) .— Այս ալ համաճարակային և տեղային հիւանդութիւն մը ըլլալով փոխանցիկ է . սկզբնական նշաններնին՝ հարբուխ , աչքի կարմրութիւն և արցունքոտում . ջերմութեան տատիճանի բարձրացում և երբեմն քթի արիւնհասոտութիւն . այս շրջանը 4-7 օր տեւելէ վերջ մորթին վրայ գնդասեղի գլխուն և կամ աւելի խոշորութեամբ կարմիր ցայտումներ յառաջ կուգան . որոնք նախ զէմքէն կը սկսին : Այս կարմրութենէն 10 օր վերջ ցայտումները կը թեփոտին և կ'աննետանան : Հիւանդին սենեակը տաք պահել և խաշած (ըխլամաւու , tilleul)ի ջուր խմցնել , բերանն ալ eau boriquéeով ցօղուել :

Ջրծաղիկ (varicelle , սու չիչէյի) .— Ջրծաղիկը ջերմութեամբ և փոքր ժայթքումներով կը սկսի . այս ժայթքումներուն մէջ հեղուկ մը յառաջ կուգայ . այս հեղուկը կը թարստոտի իր շուրջ թեթեւ , կոբ և կարմիր բորբոքում մը յառաջ բերելով : Ժայթքումները յաջորդ օրն իսկ կը պայթին . և կեղեւ մը կը կազմուի . ինքնին անվտանգ հիւանդութիւն մը ըլլալով կարճ ժամանակամիջոցի մէջ կը բուժուի , միայն մէկ քանի օր տաք սենեակի մէջ հանգստանալով :

Ծաղիկ (Petite Vérole , չիչէք) .— Ծաղիկը սոսկալի հիւանդութիւն մըն է , անթիւ են իր զոհերը . իր աւերները տարածած է տուներու , թաղերու և փոքր գիւղերու վրայ , փճացնելով զանոնք : Այսօր սակայն , չնորհիւ մեծանուն գիտուն Jannerի պատուատի հրաշալի գիւտին՝ զսպուած է իր

Թափը և կարելի եղած է պատուաստումով զերծ մնալ այդ հիւանդութենէն :

Հիւանդութիւնը կը սկսի տաքութեան բարձրացմամբ որ մինչեւ 40 աստիճանի կը հասնի . ենթական կը մսի, կը դողայ, կը քրանի և մէջքի ուժով ցաւ մը կ'ունենայ . յետոյ կարմիր փոքր ժայթքումներ յառաջ կուգան, որոնք նախ դէմքէն սկսելով կը տարածուին բոլոր մարմնոյն վրայ և կը թարախտան . այս ժայթքումներուն մէջ գտնուած հեղուկը կաթնագոյն և խիստ դարչաճոտ է . լորձուեքը կը շատնաւ . հիւանդը կը դառանցէ . դէմքը, ձեռքերը եւ ոտքերը կ'ուռին և Խեղճը անտանելի տանջանքներով կը տառապի : Ապրօքինման շրջանին բոլոր ժայթքումները կը չորնան եւ անոնց տեղ կեղեւներ յառաջ կուգան, որոնք թափելով անհաճոյ սոլիներ կը ձգեն, ինչ որ շատ անդամ մմէնքդ ալ տեսած էք արդէն :

Հիւանդագահին մաքրութիւնը մեծ դեր ունի այս հիւանդութեան մէջ :

### ՏԵՆԴԷ ԵՒ ՉԱՅՆ ՉԱՓԵԼՈՒ ՄԻՋՈՅՆԵՐԸ

Տենդը ակտաբանական վիճակ մը ըլլալով կը յտականշուի ջերմութեան բարձրացմամբ և բազկազարկի արագացմամբ :

Ինական ջերմութեան աստիճանը  $36\frac{1}{2}$ — $37\frac{1}{2}$  է : Ջերմութիւնը մասնաւոր գործիքով մը կը չափուի որ ջերմաչափ (thermomètre) կը կոչենք :

Ջերմաչափը 10-15 անգ . երկարութեամբ ապակեայ, աստիճանաւորուած խողովակ մըն է որ անդիկի ընդունարանով կը վերջանայ : Դործածուած ջերմաչափը maxima է զոր անաձեզ կը ցուցնեմ :

Հիւանդութեանց մէջ ջերմութեան այս աստիճանը սասակութեան համեմատ կը բարձրանայ . 42 աստիճանէն վեր եւ 34էն վար մահացու է, ջերմութեան աստիճանը ստուգելու համար զայն մարմնոյն վրայ գլխաւորաբար հասեւեալ տեղերը կը դրուի . բերնին մեջ, անուրիկն ներքեւ, յետնազիլին եւ ձեռքին մեջ :

Լ'նդհանրապէս անութէն եւ յեանաղիէն կ'առնուի ջերմութեան աստիճանը . ջերմաչափը անութին ներքեւ 10-15 վայրկեան պէտք է պահել : Յեանաղիին մէջ ջերմաչափը 2-3 անդ . ներս պէտք է մտնայ . անոր մուտքը զիւրացնելու համար պէտք է վերի մասը իւղոտել . սրբանին մէջ 4-5 վայրկեան թողուլ :


Ջերմաչափը գործածելէ վերջ մաքուր ջուրով լուայ , օճառած լաթով մը սրբել , իսկ փոխանցիկ հիւանդութեանց մէջ ալքօլով կամ acide phénique կամ subliméի լուծաջրով լուայ :

Սովորաբար օրը երկու անգամ կ'առնուի ջերմութեան աստիճանը , եւ միշտ որոշ պահերու : Գործիքը շատ զիւրաբեկ ըլլալուն՝ բամպակի մէջ պահեցէք զայն :

Ահաւասիկ , օրիորդներ եւ պարոններ , այս վայրկեանիս լրացողի ինձ վստահուած պաշտօնը . եւ կը սիրեմ յուսալ թէ իմ կարողութեանս չափով կրցի ձեզ առաջնորդել հոն ուր դուք պիտի կիրարկէք ձեր հիւանդապահութեան արուեստը , օժտուած զիտական կարգ մը ծանօթութիւններով : Այս առթիւ իմ շնորհակալութիւններս բոլորիդ , որ բարի եղաք մասնաւոր ուշադրութեամբ հետեւելու դասախօսութեանցս , որոնք պէտք է խոստովանիմ շատ անգամ որոշուած պահերէն աւելի երկար տեւեցին . յուսամ սակայն առանց ձեզ ձանձրացնելու :

Կը մնայ ինձ այս վայրկեանիս իբր հիւանդապահութեան դասընթացքը լրացնողներ , ձեզ ներկայացնել « Հայ Բժշկական Միութեան » յարգելի նախագահին , իր բանասիրական ուսումնասիրութեամբ հայ բժշկական պատմութեան կեանք տուող Տ.քթ . Վահրամ էֆ . Թորգոմեանի , հրաւիրելով զայն որ բարեհաճի ձեզ խօսիլ հուսկ բանքը , ինչ որ իրեն վերապահուած է :

Երթա՛ք բարեաւ . յաջողութիւն ձեր նոր ասպարէզին մէջ :





Հ 59614

59614

A 59614

ՏՔԹ. ԱՇՈՏ ՊԱՀՁԷՎԱՆԵԱ

Հասցե. — Բերա-Թագսիմ, քիւ 1

ՏՔԹ. Գ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ԲՃԻՐԿ ԱԳԳ. Հիւանդանոցի

Ամեն օր կեսօրե վերջ, ԵՆԵԻ-Գաբու, Սարիմ ԷՖ. Կարս.  
պետեանի ղեղարանը կը դարմանէ իրեն զիմոյ բոլոր հիւ-  
ւանդները:

ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԸ ՉՐԻ



ԳԻՆ՝ 2 ԴԱՇԵԿԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

220059614